

Ոչ պաշտոնական թարգմանություն

Մարդու Իրավունքների Եվրոպական Դատարան

Առաջին բաժին

Աջդարիչն ընդդեմ Խորվաթիայի գործով

(Բողոք N° 20883/09)

Վճիռ

Ստրասբուրգ

Դեկտեմբերի 13, 2011թ.

Վերջնական



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
ներկայացուցչության օժանդակությամբ:

04/06/2012

*Այս վճիռը վերջնական է դարձել համաձայն Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2(գ) կետի:
Այն կարող է ենթարկվել խմբագրական վերանայման:*

2



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
ներկայացուցչության օժանդակությամբ:

Աջդարիչն ընդդեմ Խորվաթիայի գործում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը որպես Պալատ հանդես գալով հետևյալ կազմով. նախագահող՝ Անատոլի Կովլեր, դատավորներ՝ Նինա Վայիչ, Պիր Լորենզեն, Խանլար Հաջին, Միրջանա Լազարովա Տրաջկովսկա, Լինոս-Ալեքսանդրե Սիցիլյանոս, Էրիկ Մոս և Բաժնի մատենավար՝ Սորեն Նիելսեն, 2011թ-ի նոյեմբերի 22-ին կայացած դռնփակ խորհրդակցությունից հետո հրապարակում է հետևյալ վճիռը, որ կայացվել է այդ թվականին.

Վարույթը

1. Գործի համար հիմք է հանդիսացել Բոսնիա և Հերցեգովինայի քաղաքացու՝ պրն. Նեդո Աջդարիչի կողմից Խորվաթիայի Հանրապետության դեմ՝ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության վերաբերյալ կոնվենցիայի («Կոնվենցիան») 34-րդ հոդվածի հիմքով 2009թ-ի մարտի 13-ին ներկայացված դիմում-բողոքը (թիվ 20883/09):
2. Դիմումատուին ներկայացրել են Վիեննայում աշխատող փաստաբաններ պրն. Լանսկին և պրն. Գանզգերը: Խորվաթիայի կառավարությանը («Կառավարությունը») ներկայացրել է իր գործակալը՝ տ-ն Ս. Ստազնիկը:
3. 2010թ-ի նոյեմբերի 10-ին Առաջին բաժնի նախագահը որոշել է դիմումի մասին ծանուցում ուղարկել Կառավարություն: Նաև որոշվել էր միևնույն ժամանակ որոշել դիմումի թույլատրելիության հարցը (29-րդ հոդված կետ 1): Այդ նույն ամսաթվին Բոսնիա և Հերցեգովինայի կառավարությանը տեղեկացվել էր վարույթին միջամտելու՝ Կոնվենցիայի 36-րդ հոդվածի 1-ին կետով և 44-րդ կանոնի 1(բ) կետով սահմանված իր իրավունքի մասին: Նրանք որոշել են չօգտվել այդ իրավունքից:

3



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
ներկայացուցչության օժանդակությամբ:

Փաստերը

Գործի հանգամանքները

4. Դիմումատուն ծնվել է 1953թ-ին և ապրում է Լեպոզլավայում:

1. Գործի փաստական հիմքերը

5. 1998թ-ի հոկտեմբերին երեք անձինք՝ Ռ.Ս.-ն, Ջ.Ս.-ն և Ի.Ս.-ն սպանվել են իրենց տանը Խորվաթիայի Կունա քաղաքում, իսկ տնից գողացվել է առնվազն 960,000 խորվաթական կունայի չափով գումար:

6. 1999թ-ի ապրիլին Սիսակի տարածքային դատարան ոմն Ջ.Ս.-ի դեմ մեղադրանք է ներկայացվել վերոհիշյալ երեք սպանությունների առնչությամբ: Նա ի սկզբանե արդարացվել է, բայց 2005թ-ի հունիսի 1-ին Գերագույն դատարանը կրկնակի դատ է նշանակել:

7. 2005թ-ի անհայտ ամսաթվին դիմումատուն ձերբակալվել է Խորվաթիայում մեքենայի գողություն անելու կասկածանքով և կալանքի տակ է պահվել Ջագրեբի Ռեմետինեք բանտում:

8. 2005թ-ի դեկտեմբերի 29-ին նա հիվանդացել է և տեղափոխվել Ջագրեբի բանտային հիվանդանոց: Նա թիվ 206 սենյակը կիսել է յոթ այլ բանտարկյալների հետ, որոնց թվում եղել են նաև Մ.Ջ.-ն և Ս.Ս.-ն: Վերջինս նախկին ոստիկան էր: Նա արդեն իսկ դատապարտվել էր յոթ տարի ազատազրկման սպանության փորձի համար, բայց նրա դատապարտումը դեռևս վերջնական չէր: Անհայտ ամսաթվին Ս.Ս.-ն գրել է Բջելովարի



ուստիկանության բաժին՝ տեղեկացնելով, որ իրեն հայտնի են Կուտինայում տեղի ունեցած երեք սպանությունների հանգամանքները:

9. 2006թ-ի մարտի 3-ին Ս.Ս.-ն ցուցմունք է տվել Բջեղովարի տարածքային դատարանի քննող դատավորի առջև: Նա ասել է, որ պատահամամբ լսել է դիմումատուի և Մ.Ջ.-ի միջև տեղի ունեցած զրույցը, որի ընթացքում նրանք քննարկել են այն երեք անձանց սպանությունը, որում մեղադրվում էր Մ.Ջ.-ն, և որը բացահայտեց, որ դիմումատուն հանցակից է եղել այս հանցագործություններում: Նրա վկայության գրավոր արձանագրության՝ գործին առնչվող մասում ասվում է.

«Առողջական խնդիրների պատճառով ինձ տեղափոխել են Ջագրեբի բանտային հիվանդանոց, որտեղ ես մնացել եմ 2005թ-ի նոյեմբերի 23-ից մինչ 2006թ-ի հունվարի 13-ը: ... Հիվանդանոց տեղափոխվելու հաջորդ օրը Մ.Ջ.-ին բերեցին նույն սենյակ: Նրա մահճակալը իմ մահճակալի կողքն էր: ...

Նեղջելիջկո Աջդարիչի՝ նույն սենյակ տեղափոխվելուց մոտ հինգից վեց օր հետո ...

Նրա մահճակալը Մ.Ջ.-ի մահճակալի մոտ էր, այնպես որ Մ.Ջ.-ն երկուսիս մեջտեղում էր: Երբ Նեղջելիջկո Աջդարիչը եկավ սենյակ, նա ողջունեց Մ.Ջ.-ին և նրանց զրույցն այնպիսի տպավորություն թողեց, թե նրանք երկար տարիներ ծանոթ են: ...

Մ.Ջ.-ն և Նեղջելիջկո Աջդարիչը օրերով գաղտնի զրույցներ ունեցան: Նրանք իրենց մահճակալներին նստած էին խոսում, և քանի որ մահճակալս նրանց մահճակալների կողքն էր, չնայած նրան, որ ցածր ձայնով էին խոսում, ես կարողանում էի լսել, թե ինչ են խոսում: Ես լսեցի, թե ինչպես Նեղջելիջկո Աջդարիչն ասաց, որ այդ փողից մեծ շահույթ է ստացել և որ իր բիզնեսը ծաղկում է: Նաև լսեցի, թե ինչպես Մ.Ջ.-ն ասաց: «Ամեն ինչ լավ ենք արել:



Միակ սխալս այն էր, որ փողը դրեցի տարայի մեջ»: Բայց նա չբացատրեց, թե ինչ տարայի մասին է խոսքը: Նրանք նաև նշեցին, որ մոտ 960,000 խորվաթական կունայի չափով գումար է գտնվել տանը, որոշ մասը օտար արժույթով, որոշն էլ խորվաթական կունայով: Լսեցի, թե ինչպես Նեդջելջկո Աջդարիչն ասաց, որ ինքը վախեցել է գնալ Ստարա Գրադիսկայի և Բոսանսկա Գրադիսկայի միջև եղած սահմանի մոտ և ի վերջո հատել է պետական սահմանը Դավորում: Նա նաև նշեց, որ նրան ուղեկցել է մի կին, բայց ես չկարողացա հասկանալ, թե խոսքը իր, թե Մ.Ջ.-ի կնոջ մասին էր:

Նաև լսեցի, թե ինչպես Նեդջելջկո Աջդարիչն ասաց Մ.Ջ.-ին, որ ինքը ստիպված է եղել մի ամբողջ օր քայլել Բոսնիայում՝ Բանջա Լուկայում, որպեսզի բջջային հեռախոսից ազդանշան ուղարկի Բջելովար, որը ցույց կտար, որ Մ.Ջ.-ն Բոսնիայում է եղել ... Նեդջելջկո Աջդարիչը նաև նշեց, որ ազդանշան ուղարկելու նպատակով բարձրացել է մի բլուր, որը հայտնի է որպես «Վեսելի Բրիջեզ», բայց չի կարողացել և ի վերջո ազդանշանն ուղարկել է «Մոտաջիկա» սարից: Երբ նրանք խոսում էին բջջային հեռախոսից ազդանշան ուղարկելու մասին լսեցի, թե ինչպես Մ.Ջ.-ն ասաց Նեդջելջկո Աջդարիչին, որ, եթե որևէ բան պատահի, Նեդջելջկոն վկայություն կտա, որ եղել է Բոսնիայում և նրանց խոսակցությունից եզրակացրի, որ Նեդջելջկո Աջդարիչը Բոսնիա է գնացել Մ.Ջ.-ի բջջային հեռախոսով և, որ հեռախոսագանգեր կատարելով նա այլուրեքություն է ստեղծել Մ.Ջ.-ի համար, այլ կերպ ասած ցույց տալով, որ նա Բոսնիայում է եղել:

Մ.Ջ.-ի և Նեդջելջկո Աջդարիչի միջև գաղտնի խոսակցությունը լսելիս նաև լսեցի, թե ինչպես նրանք նշեցին, թե ինչպես են զարմացել գտնելով տանը երեք մարդու, և որ չէին սպասել երրորդ մարդու և որ այդ իսկ պատճառով է, որ երկար ժամանակ սպասել են տան դիմաց, որ որևէ մեկը դուրս գա և



երեխաներին տանի: Նրանք նաև նշեցին, որ տեսել են, թե ինչպես է մի կին երեխաներին տնից դուրս տարել, բայց չլսեցի՝ արդյոք նրանք ի նկատի ունեին մեկ, թե մեկից ավելի երեխաների:

Նաև լսեցի, թե ինչպես Մ.Ջ.-ն ասաց Աջոարիչին, որ իր կինն աշխատել է զինված ուժերում որպես ատամնաբույժ կամ ատամնատեխնիկ, լավ չհասկացա, և որ քննվող իրադարձությունից հետո նրա կինն ինչ-որ բան է ասել քաղաքում, և որ դա ամենաշատն է նպաստել իրեն գտնելուն և ձերբակալելուն:

Մ.Ջ.-ի և Աջոարիչի միջև տեղի ունեցած վերոհիշյալ զրույցից, որի ընթացքում նրանք նշեցին, որ զարմացել են գտնելով տանը երրորդ մարդու, ես եզրակացրի, որ ֆինանսական գործարքը տեղի էր ունեցել տանը, և որին ներքաշված է եղել երրորդ անձ:

Նրանց զրույցից ես նաև եզրակացրի, որ Մ.Ջ.-ն մեծացել է տանտիրոջ հետ, ով ունեցել է տարադրամի փոխանակման գրասենյակ և ով սպանվել է, և ես եզրակացրի, որ նրանք ընդհարում են ունեցել:

Հիշում եմ, որ Աջոարիչն ասաց Մ.Ջ.-ին, որ չի համարձակվել հատել Ստարա Գրադիսկայի և Բոսանսկա Գրադիսկայի միջև եղած սահմանը ուժեղացրած անվտանգության պատճառով և որ այդ պատճառով էլ հատել է Դավորը նավով կամ լաստանավով: Նաև հիշում եմ, որ նրանք նշեցին, որ Մ.Ջ.-ի տանը տարայում 460,000 խորվաթական կունայի չափով գումար է գտնվել, իսկ գումարի մնացած մասն ի վերջո Աջոարիչի մոտ է մնացել: Նեդջելջկո Աջոարիչը Մ.Ջ.-ին նաև ասել է, որ ծախսել է փողի իր մասը Բանջա Լուկայում մեքենայի առք ու վաճառքի բիզնեսի բացման վրա: Նաև լսեցի, թե ինչպես Նեդջելջկո Աջոարիչը ասաց Մ.Ջ.-ին, որ իր ընկերությունը վաճառել է գողացված մեքենաներ և ներգրավված է եղել կյանքի և մեքենայի



ապահովագրման գործի մեջ, և որ Նեդջելջկո Աջդարիչի կինը նույնպես աշխատանքի է վերցվել այնտեղ և որ այնտեղ կային նաև այլ աշխատողներ: Նաև լսեցի, թե ինչպես Աջդարիչն ասաց Մ.Ջ.-ին, որ իր ընկերության միջոցով հնարավոր է մեքենա ձեռք բերել իր բոլոր փաստաթղթերով առանց ոստիկանության մոտ գնալու:

Հարցրի Աջդարիչին «Վեսելի Բրիջեզ»-ի մասին, քանի որ ցանկանում էի ինչ-որ բան իմանալ դրա մասին, և նա ինձ ասաց, որ Ռոման ապրել էր այդ տարածքում և դա էր պատճառը, որ այն հայտնի էր որպես «Վեսելի Բրիջեզ»: Ես չգիտեմ, թե որտեղ է այդ տեղը և երբևէ չեմ եղել այնտեղ:

Նաև լսեցի, թե ինչպես Աջդարիչն ասաց, որ վախենում է բացահայտվելուց, քանի որ պատժի կրման ավարտին չորս ամիս է մնում: Հետո Մ.Ջ.-ն պատասխանեց, որ մտահոգվելու կարիք չկա, քանի որ մեղադրող կողմի գլխավոր վկան փոխել է իր ցուցմունքը՝ տալով այդ ցուցմունքից բոլորովին տարբերվող ցուցմունք»:

10. 2006թ-ի ապրիլի 4-ին Ս.Ս.-ն վկայություն է տվել Մ.Ջ.-ի դեմ հարուցված քրեական գործով Սիսակի տարածքային դատարանի առջև կայացած լսման ժամանակ: Վկայության՝ գործին առնչվող հատվածում ասվում է.

«Այժմ կալանքի տակ եմ պահվում Բջելովարի բանտում, քանի որ Բջելովարի տարածքային դատարանի կողմից դատապարտվել եմ յոթ տարի ազատազրկման մարդասպանության փորձի, ինչպես նաև վտանգավոր գործողությունների արդյունքում մարդու կյանքն ու ունեցվածքը վտանգի տակ դնելու մեղադրանքներով, սակայն դատապարտումս դեռևս վերջնական չի դարձել: Առողջական խնդիրների պատճառով ուղարկվել եմ Զագրեբի բանտային հիվանդանոց, որտեղ 2005թ-ի նոյեմբերի վերջերից մինչև 2006թ-ի հունվարի 13-ը մնացել եմ թիվ 206 սենյակում:



Առաջին անգամ մեղադրյալին տեսել եմ Ջագրեբի բանտային հիվանդանոցում, երբ նա տեղափոխվել է նույն սենյակ: Մինչ այդ նա վիրահատարանում էր եղել, հետո էլ տեղափոխվել էր սենյակ, որտեղ ծխելն արգելված էր: Չեմ հիշում, թե կոնկրետ որ ամսաթվին նա տեղափոխվեց իմ սենյակ, բայց հիշում եմ, որ 2005թ-ի դեկտեմբերն էր, և արդյունքում մենք շատ ժամանակ անցկացրինք նույն սենյակում: Իր ժամանումից անմիջապես հետո ծանոթացանք, սկսեցինք զրուցել: Միանգամից ասացի նրան, թե քրեական ինչ հանցանքի համար էի կալանավորված, բայց նա ի սկզբանե չէր ուզում ասել, թե ինչում է մեղադրվում: Քննարկելիս վեճ ունեցանք սույն գործով դատապաշտպանի առնչությամբ, քանի որ երկուսիս նույն դատապաշտպանն էր պաշտպանում, և ինձ դուր չէկավ այն փաստը, որ մեղադրյալը քննադատում էր նրան:

2005թ-ի դեկտեմբերի կեսերին, չեմ հիշում կոնկրետ օրը, Նեղջելջկո Աջդարիչը Ռեմետիների բանտից նույնպես տեղափոխվեց նույն սենյակ: Անմիջապես նկատեցի, որ մեղադրյալը և Նեղջելջկո Աջդարիչը այնպես ողջունեցին միմյանց, որ կարծես թե երկար ժամանակ է ինչ ճանաչում են իրար: Նեղջելջկո Աջդարիչի կողմից զբաղեցրած մահճակալը մեջտեղում էր, այսինքն՝ իմ և մեղադրյալի մահճակալների միջև: Սենյակում վեց բանտարկյալ կար, որոնք հաճախ փոխվում էին:

Քանի որ մեղադրյալի կողմից զբաղեցրած մահճակալը Նեղջելջկո Աջդարիչի մահճակալի մոտ էր, և մահճակալների միջև հեռավորությունը 20-30 սմ էր, նրանք հաճախ խոսում էին իրար հետ: Նրանք սկզբում խոսեցին այն մասին, թե ինչով է զբաղվում Նեղջելջկո Աջդարիչը Բանջա Լուկայում: Այս զրույցները հիմնականում լսում էի այն ժամանակ, երբ մահճակալիս պառկած լրագիր էի կարդում և խաչբառներ լուծում: Հստակորեն հիշում եմ, թե ինչպես մեղադրյալը և Նեղջելջկո Աջդարիչը սկսեցին քննարկել քրեական հանցագործությունը,



որում մեղադրվում էր Աջդարիչը, և հիշում եմ, որ Աջդարիչը Կարվոլաքի մոտերքում մեքենա էր գնել, որը գողացվել էր, և Աջդարիչը, նրա կինը և մի երրորդ անձ ձերբակալվել էին դրա համար: Աջդարիչը կալանքի տակ էր մնացել, մինչդեռ նրա կինը ազատ էր արձակվել: Աջդարիչն ասաց, որ դատապարտվել է մեկ տարի ազատազրկման, և որ իր բանտարկության ժամկետի ավարտին մնացել է չորս ամիս, որից հետո նա ազատ կարձակվի, և հիշում եմ, որ նա վախենում էր, իսկ մեղադրյալն էլ սփոփում էր նրան: Նաև Աջդարիչն ասաց, որ վաճառելիս է եղել մաքսանենգության միջոցով ձեռքբերված մեքենաներ, մեքենայի պետհամարանիշներ և մեքենայի ապահովագրական փաստաթղթեր, և որ Գերմանիայում սարքավորում է գնել՝ որոշելու համար թանկարժեք մեքենաների ծածկագրերը:

Նրանց զրույցից հասկացա, որ մեղադրյալն ընտանիք ունի Բանջա Լուկայում, և որ նրանք ծանոթացել են այնտեղ: Նաև հիշում եմ, որ Աջդարիչն ասաց, որ մարդը, ումից նա գնել էր մեքենան, մահացել է: Նա ասաց, որ բախտը բերել է, որ նա մահացել է, այլապես կբացահայտվեր, թե ինչպես է ինքը կատարել քրեական հանցագործությունը: Մեկ այլ բանտարկյալ՝ Ջ.Մ.-ն արձագանքեց այդ պատմությանը, քանի որ գիտեր այն մարդուն, ով մահացել էր:

Դրանից հետո նրանք երկուսով սկսեցին խոսել բջջային հեռախոսի մասին: Աջդարիչն ասաց, որ Կուտինա է գնացել Ս.-ի հետ, չգիտեմ այդ մարդուն, և որ նրանք երկար ժամանակ սպասել են, որ մի կին տուն վերադառնա, այն կինը, որ հեռացել էր տնից մեկ կամ մի քանի երեխաների հետ, լավ չհասկացա այս մասը: Նաև լսեցի, թե ինչպես ասացին, որ տեղյակ չեն եղել, որ այդ տանը երրորդ մարդ էլ կա: Հիշում եմ, որ ասացին, որ սպասել են, որ տուն մտնեն, և որ մեղադրյալի կինը նույնպես այնտեղ է եղել, և որ դա վերաբերում էր տարադրամի փոխանակման գրասենյակին, որտեղ աշխատում էր մեղադրյալի



մանկության ընկերը: Աջդարիչի ասածից հասկացա, որ նա մտահոգված էր, և հիշում էմ, թե ինչպես մեղադրյալն ասաց նրան, որ կինը, որը մեղադրող կողմի՝ դատավարության հիմնական վկան էր, փոխել էր իր վկայությունը նրանց օգտին: Նրանք նաև քննարկեցին գումարը, և հիշում էմ, թե ինչպես Աջդարիչն ասաց, որ կվճարի մեղադրյալի պաշտպանության համար: Նրանք նաև նշեցին, որ առաջին փաստաբանը, ով պաշտպանել է մեղադրյալին այս դատաքննության ժամանակ, այնուհետև գործը հանձնել է փաստաբան Բ.Ջ.-ին: Այն բանից հետո, երբ հեռացա Ջագրեթի բանտային հիվանդանոցից, կապվեցի Բջեյլովարի ոստիկանության հետ, և նրանք հարցրին, թե արդյոք չեմ ցանկանա դատի ժամանակ վկայություն տալ մեղադրյալի դեմ, ես էլ ասացի, որ սկզբում կցանկանայի խորհրդակցել փաստաբանիս՝ Բ.Ջ.-ի հետ, ով թե՛ իմ և թե՛ մեղադրյալի դատապաշտպանն էր: Ես խորհրդակցի նրա հետ, և նա այցելեց ինձ բանտում և հարցրեց՝ արդյոք որևէ բան գիտեմ այդ դեպքերի մասին: Ասացի նրան, որ մեղադրյալն ասել է, որ բացահայտվել է այն բանի արդյունքում, որ նրա կինն ինչ-որ բաներ է ասել քաղաքում այլ մարդկանց և փաստաբանն ինձ հարցրեց, թե ում համար եմ աշխատում: Ասացի նրան, որ ոչ մեկի համար չեմ աշխատում և որ որոշել եմ վկայություն տալ երեխաների համար, որոնք գործի ետևում են թողնվել: Փաստաբանն ասաց, որ խոսելիս զգուշություն ցուցաբերեմ, և որ հնարավոր է «կլանվեմ միության կողմից»: Նա ասաց դա, երբ հիշատակեցի Ս. անունը:

Նաև կցանկանայի ավելացնել, որ լսել եմ, թե ինչպես են մեղադրյալը և Աջդարիչն ասել, որ ավելի ուշ նրանց համար խնդիր է եղել Բանջա Լուկա հասնելը, և որ մեղադրյալի կինը հատել է պետական սահմանը Դովերում, քանի որ մեղադրյալի կինը ստիպված էր մեղադրյալի բջջային հեռախոսը վերադարձնել Խորվաթիա, մինչդեռ Ս.-ն հատել է պետական սահմանը



Ստարա Գրադիսկայում: Աջդարիչը և մեղադրյալի կինը վերցրել են փողը և երկու բջջային հեռախոսները, իսկ մեղադրյալը վերադարձել է Բջելովար: Նրանք տարել էին բջջային հեռախոսները Բոսնիա և Հերցեգովինա, քանի որ ցանկանում էին ազդանշաններ ուղարկել Բջելովար: Նրանք նշեցին, որ փորձել են ազդանշան ուղարկել Մոտաջիկա սարից, բայց ազդանշանը ցածր է եղել, ուստի նրանք գնացել են Բանջա Լուկային մոտ գտնվող մի տարածք, որը հայտնի է որպես «Վեսելի Բրիջեզ» և այնտեղից ազդանշան են ուղարկել:

Նաև հիշում եմ, որ նրանք ասացին, որ փողը գտնվել է տարայում, բայց չգիտեմ սառցարան ի նկատի ունեին, թե որևէ այլ բան: Այսպիսով փողը գտնվել է այդ տարայում, մոտ 450,000 խորվաթական կունայի չափով գումար:

Կցանկանայի նաև նշել այլ մանրամասներ, որոնք նկատել եմ բանտային հիվանդանոցում մնալու ընթացքում: Կիրակի էր, այցելության ժամ, և՛ մեղադրյալը, և՛ Աջդարիչը այցելուներ ունեին: Աջդարիչը վերադարձավ մեղադրյալից 10ր. առաջ: Սենյակի դուռը բաց էր, և ես տեսա, թե ինչպես է Աջդարիչը սրահի բաց պատուհանից ձեռքով անում ինչ-որ մեկին: Մոտեցա պատուհանին տեսնելու, թե ում է նա ձեռքով անում, և նրան էլ հարցրի դրա մասին, և պատասխանեց՝ կնոջը: Տեսա մեքենան, որով ժամանեց նրա կինը: Գուժ մակնիշի էր: Եվ հարցրի նրան, թե ինչպես է ստացվել, որ նրա կինն այդպիսի մեքենա է վարում, քանի որ նա գլուխ էր գովում, թե թանկարժեք մեքենաների առք ու վաճառքով է զբաղվում: Եվ նա ասաց, որ այն պատկանում է Խորվաթիայում ինչ-որ մեկին, ով նրա կնոջը մեքենայով բերել էր այցելության համար, և որ այդ մարդու մոտ է մեղադրյալի պաշտպանությունը ֆինանսավորելու փողը: Հարցրի նրան, թե արդյոք նա Ս.-ն էր, և նա ասաց, որ դա իմ գործը չէ:

Այլևս ավելացնելու ոչինչ չունեմ:



Դատախազի տեղակալի հարցին վկան պատասխանել է, որ մեղադրյալի և Նեդելզկո Աջդարիչի զրույցից հասկացել է, որ Աջդարիչն իր բաժին փողով Բանջա Լուկայում բիզնես է բացել, որտեղ աշխատում են 5 կամ 6 մարդ, և որ այդ «բիզնեսը» ղեկավարվել է իր կնոջ կողմից, որն իր երկրորդ կինն էր. նա ամուսնավուծվել էր իր առաջին կնոջից:

Մյուս հարցին պատասխանել է, որ լսել է, թե ինչպես է մեղադրյալն ասում, որ իր կինն ատամնաբույժ է աշխատում է Բջելովարի զինված ուժերում:

Հատուկ հարցին պատասխանել է, որ նրանց զրույցից լսել է, որ «Վեսելի Բրիջեզ»-ը Ռոմայի բնակավայրերից է, որը մոտ է գտնվում Բանջա Լուկային, և որ Վրբաս գետն անցնում է նրա մոտով:

Մյուս հարցին պատասխանել է, որ իր մոտ այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ մեղադրյալն ու Նեդելզկո Աջդարիչը մինչ այդ ծանոթ են եղել: Մեղադրյալը կալանքի տակ է պահվել Սիսակում, իսկ Աջդարիչը՝ Զագրեբում: Ինչ վերաբերում է Աջդարիչի մտահոգություններին, դրանք պայմանավորված էին այն վախով, որ կալանքի տակ պահվելու ընթացքում կբացահայտեին, որ նա է այդ քրեական հանցագործության կատարողը:

Դատախազի տեղակալի հաջորդ հարցին վկան պատասխանել է, որ Բոսնիա և Հերցեգովինայից բջջային հեռախոսով ազդանշան ուղարկելու նպատակը ցույց տալն էր, որ այդ ժամին մեղադրյալը եղել է Բոսնիա և Հերցեգովինայում:

Մյուս հարցին պատասխանել է, որ լսել է, որ մեղադրյալն իր բաժին փողը տարել է իր տուն, և որ այն բանի արդյունքում, որ նրա կինը Բջելովարում մարդկանց ինչ-որ բաներ է ասել, տունը խուզարկության է ենթարկվել, և ոստիկանությունը գտել է փողը ինչ-որ «տարայում»:

Դատապաշտպանի հարցին պատասխանել է, որ Ջ.Մ.-ն և Վ.Բ.-ն այդ նույն ժամանակահատվածում եղել են Զագրեբի բանտային հիվանդանոցի նույն

սենյակում: Նրանց հետ է մնացել նաև Ռ.-ն, ով Գոսպիկ բանտից տեղափոխվել էր Լեպոզլավա, բայց ավելի կարճ ժամանակով:

Դատապաշտպանի մյուս հարցին պատասխանել է, որ բանտարկյալները հաճախ փոխում էին մահճակալները, երբեմն նույնիսկ օրը մի քանի անգամ: Նա նաև նշել է, որ պատի մոտ գտնվող առաջին մահճակալը զբաղեցրել է Մ.-ը, իսկ իր (վկայի) մահճակալը վերջինիս մահճակալի կողքն է եղել, և որ դրանից հետո նա չի տեղափոխել մահճակալները: Իր մահճակալի մոտ գտնվող մահճակալը զբաղեցրել է Աջդարիչը, որն էլ գտնվել է մեղադրյալի մահճակալի մոտ:

Դատապաշտպանի այն հարցին, թե արդյոք մյուս բանտարկյալներն էլ են լսել մեղադրյալի և Աջդարիչի միջև տեղի ունեցած զրույցը, վկան պատասխանել է, որ չգիտի, բայց ինքը լսել է հետաքրքրությունից դրդված: Նա նաև նշել է, որ երբեմն ամբողջ զրույցն է հիշում, երբեմն էլ միայն որոշ մասեր:

Դատապաշտպանի մյուս հարցին պատասխանել է, որ մեղադրյալի և Աջդարիչի միջև տեղի ունեցած զրույցները, որոնց մասին ինքը խոսել է, հիմնականում տեղի էին ունենում կեսօրին, երբ բանտարկյալներին թույլ էր տրվում հեռուստացույց դիտել ընդհանուր սենյակում, իսկ մեղադրյալն ու Աջդարիչը կարողանում էին միայնակ մնալ ննջասենյակում և խոսել: Ինքն էլ միայն լուրերի թողարկումն էր նայում և վերադառնում սենյակ, քանի որ հետաքրքրված էր նրանց զրույցների առարկայով:

Դատապաշտպանի այն հարցին, թե ով է առաջինը կապվել ոստիկանության հետ, վկան հարցրել է՝ արդյոք ստիպված է պատասխանել այդ հարցին, և երբ նրան ասել են, որ ստիպված է, նա նշել է, որ Զագրեբի բանտային հիվանդանոցից Բջելովարի բանտ հասնելուց անմիջապես հետո Բջելովարի բանտի ղեկավարության միջոցով կապ է հաստատել ոստիկանության հետ: Նա

երկու անգամ կապ է հաստատել ոստիկանության հետ. առաջին անգամ խոսել է ոստիկանության սպայի հետ, երկրորդ անգամ՝ Միսակի նախաքննական մարմնից ինչ-որ մեկի հետ (նա չգիտեր, թե ով էր դա եղել):

Դատապաշտպանի մյուս հարցին պատասխանել է, որ մեղադրյալի և Աջդարիչի ողջունելու ձևից նրա մոտ այնպիսի տպավորություն է ստեղծվել, որ նրանք երկար ժամանակ են միմյանց ճանաչել, քանի որ ձեռք սեղմելով են ողջունել միմյանց, մինչդեռ մյուս բանտարկյալները ձեռք չեն սեղմել, և նրանցից ավելի երկար ժամանակ է պահանջվել միմյանց ճանաչելու համար:

Երբ դատապաշտպանը վկային խնդրել է ճիշտ նույն ձևով կրկնել այն ամենը, ինչ մեղադրյալն ու Աջդարիչն են ասել, երբ խոսել են բջջային հեռախոսի մասին, նա ասել է, որ չի կարող ճիշտ նույն ձևով կրկնել նրանց խոսքերը, բայց նա ասել է դատարանին, թե ինչ եզրակացություններ է արել նրանց զրույցից:

Դատապաշտպանի հաջորդ հարցին վկան պատասխանել է, որ երբ Նեղջելջկո Աջդարիչը եկել է իրենց սենյակ և ողջունել մեղադրյալին, Ջ.Մ.-ն նույնպես այնտեղ է եղել:

Դատապաշտպանի մյուս հարցին վկան պատասխանել է, որ Ջ.Մ.-ն նույնպես ներկա է եղել, երբ մեղադրյալն ու Աջդարիչը խոսել են Աջդարիչի կողմից կատարված քրեական հանցագործության մասին և երբ նրանք խոսել են Կուտինայում կատարված քրեական հանցագործությունների մասին, վկայից բացի ոչ ոք ներկա չի եղել, ով վերադարձել է հեռուստացույց դիտելու սենյակից, որտեղ նա լուրեր դիտելիս է եղել:

Դատապաշտպանի հաջորդ հարցին վկան պատասխանել է, որ որևէ մեկը իրեն ոչինչ չի առաջարկել այն քրեական հանցագործության հետ կապված, որի համար նա դատապարտվել է, բայց որի համար դատապարտումը դեռևս վերջնական չէ:



Նա նշել է, որ Բ.Ջ.-ն հրաժարվել է շարունակել ներկայացնել իրեն առանց որևէ բացատրության:

Դատապաշտպանի մյուս հարցին վկան պատասխանել է, որ նրան երբեք չեն բուժել հոգեբուժական բաժանմունքում և որ իր դեմ հարուցված դատական գործի քննության ընթացքում հոգեբուժական հետազոտություն է անցկացվել: Այն բանից հետո, երբ նա ցուցմունք է տվել Բջեղովարի տարածքային դատարանում, նա այլևս կապ չի ունեցել ոստիկանության հետ:

Դատախազի տեղակալի հարցին վկան պատասխանել է, որ լսել է, թե ինչպես է մեղադրյալին բուժող բժիշկն ասում մեղադրյալին, որ նրա բուժումը երկար կլինի և կշարունակվի առնվազն վեց ամիս, որից հետո մեղադրյալը կասկած է հայտնել այն մասին, որ իրեն թունավորել են:

Այլ հարցեր չեն տրվել:

...

Մեղադրյալն առարկել է վկայի տված ամբողջ վկայության դեմ և բացատրել է, որ նա ինքը խոսել է վկայի հետ իր դեմ հարուցված քրեական գործի մանրամասների մասին:

... »

2. Դիմումատուի դատավարությունը

11. 2006թ-ի ապրիլի 26-ին Սիսակի տարածքային դատարանում դիմումատուի դեմ մեղադրանք է ներկայացվել երեք սպանությունների համար, որոնք կատարվել են Մ.Ջ.-ի հետ Խորվաթիայի Կուտինա քաղաքում 1988թ-ի հոկտեմբերի 8-ին և 9-ին: Դիմումատուի գործով քննությունը միացվել է Մ.Ջ.-ի գործով քննությանը, որն ընթացքի մեջ է եղել :

12. 2006թ-ի հունիսի 26-ին անցկացված դատալսման ժամանակ U.U.-ն ցուցմունք է տվել: Դատալսման գրավոր արձանագրության՝ գործին առնչվող մասում նշված է.

«Ինչպես երևում է 2006թ-ի ապրիլի 4-ին անցկացված դատալսման գրավոր արձանագրությունից, վկան տվել է նույն վկայությունը և ավելացնելու ոչինչ չի ունեցել:

Դատախազի տեղակալի հարցին վկան պատասխանել է, որ առաջին և երկրորդ մեղադրյալների գրույցից չի հասկացել է, թե քանի բջջային հեռախոսներ են նրանք օգտագործել քննվող գործողության ընթացքում, բայց լսել է, որ ազդանշաններն ուղարկվել են Կուտինայում գտնվող «Վեսելի Բրիջեզ» կոչվող տարածքից:

Դատախազի հաջորդ հարցին վկան պատասխանել է, որ բջջային հեռախոսներից ազդանշաններ ուղարկելու նպատակն է եղել ստիպել մարդկանց մտածել, որ այդ ժամանակ նրանք բոլորը եղել են Բոսնիայում: Նա նաև նշել է, որ առաջին և երկրորդ մեղադրյալները ընթրիքից հետո երեկոյան ժամանակը հիմնականում միասին էին անցկացնում: Նա ինքն էլ էր խոսել Աջդարիչի հետ և հարցրել նրան, թե նա ինչպես է կարողացել հաջողության հասնել Բոսնիայում և Հերցեգովինայում և հիմնել իր բիզնեսը պատերազմից անմիջապես հետո, որին երկրորդ մեղադրյալը պատասխանել է, որ նա ինչպիսի մարդ է:

Դատախազի տեղակալի մյուս հարցին վկան պատասխանել է, որ լսել է, թե ինչպես են նրանք նշում Հրվացանի կոչվող մի տարածք, բայց նա չգիտեր՝ արդյոք դա գյուղ էր, բնակավայր, թե սար, որտեղ նրանք կանգնել են սրճելու: Քանի որ ազդանշան այդ վայրից չէր կարող ուղարկվել դեպի Խորվաթիա,

նրանք շարունակել են ճանապարհը դեպի մի վայր, որը հայտնի է որպես «Վեսելի Բրիջեզ», և այնտեղից ազդանշան են ուղարկել Խորվաթիա:

Դատախազի տեղակալի հաջորդ հարցին վկան պատասխանել է, որ այն ժամանակ, երբ նա կալանքի տակ պահվելիս է եղել Բջելովարի բանտում մարդասպանության փորձի մեղադրանքներով իր դեմ հարուցված գործի կապակցությամբ, նրա դատապաշտպանը եղել է Բ.Ջ.-ն: Առաջին այցելության ժամանակ վերջինս հարցրել է նրան Ջագրեբի բանտային հիվանդանոցում առաջին մեղադրյալի հետ միաժամանակ նրա մնալու մասին: Նա ասել է դատապաշտպանին, թե ինչ է լսել առաջին և երկրորդ մեղադրյալների միջև տեղի ունեցած զրույցից, բայց շատ ավելի կարճ տարբերակը, որից հետո դատապաշտպանն ասել է նրան, որ զգույշ լինի, որ «չկլանվի մթության կողմից», և հետո հրաժարվել է շարունակել ներկայացնել նրան նրա դեմ հարուցված գործում:

Դատախազի տեղակալի մյուս հարցին վկան պատասխանել է, որ լսել է առաջին մեղադրյալից նրա կնոջ մասնագիտությունը, և որ վերջինս աշխատում է զինված ուժերում և որ նա որոշ բաներ է ասել Բջելովարում, որի արդյունքում բացահայտվել է փողի վայրը: Առաջին մեղադրյալն ասել է նրան, որ իր կինն ատամնաբույժ է, բայց ավելի ուշ պարզ է դարձել, որ նա ատամնաբույժի օգնական է:

Դատախազի տեղակալի հաջորդ հարցին վկան պատասխանել է, որ վկայությունը չի տալիս որևէ մեկին վնասելու նպատակով, այլ այն պատճառով, որ լսել է, որ երկրորդ մեղադրյալը մասնակցել է քննվող քրեական հանցագործության կատարմանը և նա օտարերկրացի է, այսինքն՝ այլ երկրից է, և այն պատճառով, որ քննվող քրեական հանցագործությունը կատարելով՝ նա դարձել է հարուստ և ապահովագրել իր գոյությունը՝ վնաս պատճառելով



այլ մարդկանց: Նաև երկրորդ մեղադրյալն ասել է, որ լավ է, որ մարդը, ումից նրանք գողացել են մեքենան, մահացել է, քանի որ այլապես քրեական հանցագործության մեջ նրանց դերը ևս կբացահայտվեր:

Դատախազի տեղակալի մյուս հարցին վկան պատասխանել է, որ ինքն էլ երեխաներ ունի և վկայությունը տվել է նաև դրդված այն փաստից, որ հանգուցյալը երեխաներ ունի, և այժմ նա հասկանում է, թե ինչ դրության մեջ են նրանք, ինչպես նաև իր երեխաները իր իսկ կատարած քրեական հանցագործության պատճառով:

Առաջին մեղադրյալի դատապաշտպանի հարցին վկան պատասխանել է, որ նշումներ է արել առաջին և երկրորդ մեղադրյալների միջև տեղի ունեցած զրույցների վերաբերյալ և ցույց է տվել դրանք դատարանին:

Վկայի կողմից կատարված նշումները կցված են գործի փաստաթղթերին:

Վկան նշել է, որ նշումները կատարվել են բառախաղի ձևով, այսինքն՝ նա բառերի տառերը խառն է գրել:

Երկրորդ մեղադրյալի դատապաշտպանի հարցին վկան պատասխանել է, որ ինքն առաջինն է տեղափոխվել Ջագրեբի բանտային հիվանդանոցի 206 սենյակ 2005թ-ի նոյեմբերի կեսերին կամ վերջերին, որտեղ նա մնացել է մինչև 2006թ-ի հունվարի 13-ը: Իրենից հետո եկել է առաջին մեղադրյալը, 10 օր հետո էլ՝ երկրորդ մեղադրյալը: Երկրորդ մեղադրյալի մահճակալը եղել է մեջտեղում՝ իր և առաջին մեղադրյալի մահճակալների միջև: Առաջին մեղադրյալի մահճակալի կողքի մահճակալը զբաղեցված է եղել ավելի տարիքով մի դուբրավացու կողմից, որը շատ չանցած տեղափոխվել է այլ սենյակ, և երկրորդ մեղադրյալը պետք է զբաղեցներ այդ մահճակալը: Առաջին մեղադրյալը հիմնականում շփվել է երկրորդ մեղադրյալի հետ: Մի անգամ վկան վեճ է



ունեցել երկրորդ մեղադրյալի հետ Հարավսլավիայի ժողովրդական բանակի լեյտենանտի առնչությամբ ...

Երկրորդ մեղադրյալի դատապաշտպանի հաջորդ հարցին վկան պատասխանել է, որ երկրորդ մեղադրյալն ասել է իրեն, որ զբաղվել է օգտագործված մեքենաների առևտրով, մեքենայի և կյանքի ապահովագրմամբ, և որ այդ բիզնեսը վարել է իր կինը, իսկ ինքը ճանապարհորդել է տղաների հետ մեքենաներ գնելու նպատակով: Երկրորդ մեղադրյալը նաև նրան ասել է, որ ծածկագրեր բացող սարք ունի, որը նա գնել է Մյունխենում: Վկան երբեք վեճ չի ունեցել առաջին մեղադրյալի հետ:

Երկրորդ մեղադրյալի դատապաշտպանի մյուս հարցին վկան պատասխանել է, որ խոսել է Բ.Ջ.-ի հետ, ով կարճ ժամանակով եղել է և իր և առաջին մեղադրյալի դատապաշտպանը, և որ առաջին մեղադրյալն ասել է իրեն, որ այդ դատապաշտպանը լավ իրավաբան է և լավ է ներկայացրել իրեն և կարողացել է հաղթել իր առաջին դատապաշտպանին: ...

Երկրորդ մեղադրյալի դատապաշտպանի հաջորդ հարցին վկան պատասխանել է, որ չգիտի՝ արդյոք նույն սենյակում մնացող մյուս բանտարկյալները լսել են, թե ինչի մասին են խոսել առաջին և երկրորդ մեղադրյալները, բայց համոզված է, որ նրանցից ոմանց բոլորովին չեն հետաքրքրել այս զրույցները: Ջ.Մ.-ն խուսափել է առաջին և երկրորդ մեղադրյալների հետ ցանկացած կապից:

...

Երկրորդ մեղադրյալի դատապաշտպանի մյուս հարցին վկան պատասխանել է, որ եզրակացրել է, որ երկրորդ մեղադրյալը եղել է դժվար կացության մեջ և այդ պատճառով հաճախ խոսել է առաջին մեղադրյալի հետ: Նա այնպիսի տպավորություն է ստացել, որ երկրորդ մեղադրյալը մտահոգված է և փորձում

20



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
ներկայացուցչության օժանդակությամբ:

է լիցքաթափվել՝ խոսելով առաջին մեղադրյալի հետ իր բանտարկության վերջին չորս ամիսների ընթացքում:

Երկրորդ մեղադրյալի դատապաշտպանի հաջորդ հարցին վկան պատասխանել է, որ 18 տարեկան տղա ունի, որի հետ շփում չունի, քանի որ վերջինիս մեծացրել են իր մայրն ու տատը:

Առաջին մեղադրյալի դատապաշտպանի մյուս հարցին վկան պատասխանել է, որ սենյակում եղել է վեց մահճակալ և որ ավելի ուշ նա մեկն է բերվել:

Այլ հարցեր չեն եղել:

Երկրորդ մեղադրյալը հերքել է վկայի վկայությունը՝ պնդելով, որ այն ամբողջությամբ կեղծված է:

...»

13. Ե՛վ դիմումատուն, և՛ Մ.Ջ.-ն հերքել են, որ հանդիպել են միմյանց մինչ 2000թ-ի դեկտեմբերին դիմումատուի տեղափոխումը Ջագրեբի բանտային հիվանդանոց: Մ.Ջ.-ն ասել է, որ Ջագրեբի բանտային հիվանդանոցի նույն սենյակում մնալու առաջին մի քանի օրը ինքը և դիմումատուն բոլորովին չեն շփվել և ավելի ուշ խոսել են ընդհանուր թեմաների շուրջ: Նրանք երբեք չեն խոսել քրեական հանցագործության մասին, որում նա մեղադրվում է: Լսելով, որ իրեն և Ս.Ս.-ին ներկայացնում է նույն դատապաշտպանը, նա ասել է Ս.Ս.-ին, թե ինչում է մեղադրվում: Դիմումատուն պնդել է, որ 1998թ-ին նա ընդհանրապես չի եղել Խորվաթիայում, բայց ապրելիս է եղել Բոսնիա և Հերցեգովինայում, և որ նա երբևէ իր կյանքում չի եղել Կուտինայում: Նա ասել է, որ Ջագրեբի բանտային հիվանդանոցում մնալու ընթացքում Ս.Ս.-ը հիմնականում խոսել է Մ.Ջ.-ի հետ և հաճախ գանգատվել է նրան:

14. 2006թ-ի սեպտեմբերի 18-ին կայացած դատալսման ժամանակ Ջ.Մ.-ն վկայություն է տվել: Գրավոր արձանագրության՝ գործին առնչվող հաստատում նշված է.

«Ես հանդիպել եմ առաջին և երկրորդ մեղադրյալներին Ջագրեբի բանտային հիվանդանոցում 2005թ-ի դեկտեմբերին: Հիշում եմ, որ մնում էի 206-րդ սենյակում մեղադրյալի, Ս.Ս.-ի և երկու այլ բանտարկյալների՝ Վ.-ի և Փ.-ի հետ: Ես առաջինը եկա, հետո՝ Ս.Ս.-ն, ումից հետո էլ առաջին մեղադրյալը և հետո երկրորդ մեղադրյալը: Միասին խոսեցինք և քննարկեցինք ամեն ինչ: Ես այնպիսի տպավորություն չեմ ստացել, որ առաջին և երկրորդ մեղադրյալները մինչ այդ ճանաչել են միմյանց՝ չնայած, որ ամենից շատ միմյանց հետ էին շփվում: Ես նաև խոսեցի երկրորդ մեղադրյալի հետ, ով ասաց ինձ, որ բանտարկվել է մեքենայի պատճառով: Ես խոսեցի նաև առաջին մեղադրյալի հետ և հարցրի նրան, թե ինչու էր բանտում. նա ասաց ինձ, որ դա երկար պատմություն է, և որ երկրորդ անգամ է կալանքի ենթարկվում:

...

Դատախազի տեղակալի հարցին վկան պատասխանել է, որ չի լսել, որ առաջին և երկրորդ մեղադրյալները միասին խոսեն քրեական հանցագործություն կատարելու մասին:

Դատախազի տեղակալի հաջորդ հարցին վկան պատասխանել է, որ ինքը պարբերաբար հեռուստացույց է դիտել և նկատել է, որ առաջին մեղադրյալը հիմնականում մնացել է սենյակում, քանի որ չի կարողացել տանել հեռուստացույցի սենյակի ծխախոտի ծուխը, ուստի նա երբեմն միայն սպորտային ծրագիրն է դիտել: Նա նաև նկատել է, որ երկրորդ մեղադրյալը հաճախ չի դիտել հեռուստացույց: Ս.Ս.-ն երբեմն դիտել է հեռուստացույց, բայց շուտ վերադարձել է սենյակ:

22



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
ներկայացուցչության օժանդակությամբ:

Այն հարցին, թե որտեղ է գտնվել Ս.Ս.-ի մահճակալը, վկան պատասխանել է, որ սենյակի մի կողմում եղել է չորս մահճակալ. առաջինը մահճակալը զբաղեցրել է ինքը, հետո դրված է եղել երկու սպասքապահարան, հետո էլ Ս.Ս.-ի մահճակալը, հետո ևս մեկ սպասքապահարան, հետո Բ.-ի մահճակալը, հետո ևս մեկ սպասքապահարան և հետո առաջին մեղադրյալի մահճակալը: Երկրորդ մեղադրյալի մահճակալը դրված է եղել մյուս մահճակալների նկատմամբ ուղղահայաց դիրքով:

Դատախազի տեղակալի հաջորդ հարցին վկան պատասխանել է, որ առաջին և երկրորդ մեղադրյալները, Ս.Ս.-ն ունեցել են նորմալ շփում, նրանք խոսել են և ինքն էլ նորմալ շփման մեջ է եղել նրանց հետ և երբևէ չի լսել կամ քննարկել Ս.Ս.-ի հետ որևէ բան, որի մասին ենթադրվում է, որ խոսել են առաջին և երկրորդ մեղադրյալները:

Առաջին մեղադրյալի դատապաշտպանի հարցին վկան պատասխանել է, որ առաջին և երկրորդ մեղադրյալները զրուցելիս խոսել են նորմալ ձայնով և որ նրանք երբեք չեն շնջացել կամ ցածր ձայնով խոսել:

Երկրորդ մեղադրյալի դատապաշտպանի մյուս հարցին վկան պատասխանել է, որ առաջին և երկրորդ մեղադրյալների և մյուսների հետ 206-րդ սենյակում անց է կացրել երկու շաբաթից ավել»:

...

Երկրորդ մեղադրյալի դատապաշտպանի հաջորդ հարցին վկան պատասխանել է, որ երկրորդ մեղադրյալը եկել է սենյակ առաջին մեղադրյալից մոտ մեկ շաբաթ կամ տաս օր հետո:

Երկրորդ մեղադրյալի դատապաշտպանի մյուս հարցին վկան պատասխանել է, որ, ինչ վերաբերում է հեռուստացույց դիտելուն, առաջին մեղադրյալն իրեն նույն կերպ է պահել երկրորդ մեղադրյալի ժամանումից թե՛ առաջ և թե՛ հետո.

նա տանել չէի կարողացել հեռուստացույցի սենյակի ծխախոտի ծուխը, ուստի
և խուսափել է հեռուստացույց դիտելուց:

...

Առաջին մեղադրյալի հարցին վկան պատասխանել է, որ առաջին մեղադրյալն
իր ժամանակի մեծ մասն անց է կացրել անկողնում՝ խաչբառներ լուծելով և
ընթերցելով:

Առաջին մեղադրյալի հաջորդ հարցին վկան պատասխանել է, որ երկրորդ
մեղադրյալի ժամանումից հետո առաջին երկու, երեք օրը նշված սենյակում
հաղորդակցում տեղի չի ունեցել առաջին և երկրորդ մեղադրյալների, ինչպես
նաև մյուսների միջև, և միայն մի քանի օր հետո է, որ նրանք բոլորը սկսել են
հաղորդակցվել և զրուցել:

... »:

15. Նույն դատավամանը Ն.Պ.-ն վկայություն է տվել: Գրավոր արձանագրության՝
գործին առնչվող հատվածում նշված է.

«12 օր եմ անցկացրել Ջագրեբի բանտային հիվանդանոցում ... այն նույն
ժամանակ, երբ առաջին և երկրորդ մեղադրյալներն էլ էին գտնվում այնտեղ ... Երբ
եկա սենյակ առաջին և երկրորդ մեղադրյալները, ինչպես նաև Ս.Ս.-ն արդեն իսկ
այնտեղ էին գտնվում: ... Հիմնականում ծխում էի Ս.Ս.-ի հետ: ... Ես որևէ
քրեական հանցագործություն չեմ քննարկել Ս.Ս.-ի հետ ... Նա ինձ միայն ասել է,
որ հույս ունի վերադառնալ Բջելովար և արդարացվել:

Այդ սենյակ ժամանելուցս ի վեր, երբ բոլորն արդեն այնտեղ էին, հիշում եմ, որ
առաջին և երկրորդ մեղադրյալները հաղորդակցվում էին և միասին միրգ
պատվիրում ճաշարանում: Երկրորդ մեղադրյալի հետ ունեցածս զրույցներից
հիշում եմ, որ նա ինչ-որ խնդիրներ ուներ պետական սահմանի վրա, իսկ ինչ

վերաբերում է առաջին մեղադրյալին, կարող եմ ասել, որ նա նախկին համակարգի ոստիկանությունում աշխատողի տպավորություն էր թողնում և շատ ծածկամիտ էր: Ինձ մոտ այնպիսի տպավորություն էր ստեղծվել, որ նա ապրում է իր առանձին աշխարհում:

...

Դատախազի այն հարցին, թե արդյոք նրանք քննարկել են, թե ինչու է նրանցից յուրաքանչյուրն ընկել բանտ, վկան պատասխանել է, որ ինքն ասել է, թե ինչու է բանտ ընկել ... Բայց չի հիշում, թե ասել են արդյոք մյուսները իրենց բանտարկության պատճառները, քանի որ համաձայն բանտային կանոնի նրանք միմյանց այդպիսի հարցեր չպետք է տային ...

Մյուս հարցին վկան պատասխանել է, որ առաջին և երկրորդ մեղադրյալների միջև սննդի և նման այլ թեմաներով զրույցներից բացի այլ զրույցներ չի լսել: Առաջին մեղադրյալը սենյակում գտնվող մյուս բանտարկյալների հետ ավելի շատ է զրուցել, քան երկրորդ մեղադրյալի հետ:

Առաջին մեղադրյալի դատապաշտպանի հարցին վկան պատասխանել է, որ չի նկատել, որ առաջին և երկրորդ մեղադրյալներն առանձնանան մյուսներից՝ չնայած այն բանին, որ նրանց թույլատրվել է հեռանալ սենյակից և զբոսնել ...

Երկրորդ մեղադրյալի դատապաշտպանի հարցին վկան պատասխանել է, որ առաջին և երկրորդ մեղադրյալների կողմից զբաղեցրած մահճակալները գտնվել են իր մահճակալի կողքին, իսկ Ս.Ս.-ի կողմից զբաղեցրած մահճակալը գտնվել է մյուս կողմում ... »:



16. Դատավարության ընթացքում դիմումատուն առարկել է Մ.Ս.-ի կողմից տրված վկայության դեմ՝ նշելով, որ վերջինս հիմնականում ներկայացրել է իր եզրակացությունները, որոնք չեն կարող համարվել որպես ապացույց, և որ նա չի կարողացել իր և Մ.Ջ.-ի միջև տեղի ունեցած ենթադրյալ զրույցներից որևէ բան կրկնել: Դիմումատուն նաև հիմնվել է Մ.Ս.-ի դեմ հարուցված քրեական գործի առնչությամբ կատարված նրա հոգեկան զննման արդյունքների վրա: Այդ զննման վերաբերյալ 2004թ-ի հոկտեմբերի 20-ին կազմած զեկույցի՝ գործին առնչվող հատվածում ասվում է.

«Հիվանդի մտավոր ունակությունների մակարդակը նորմալ սահմաններում է: Նրա անհատականության մեջ նկատվում է զգայական անկայունություն և թատերականություն:

...

Ավելի խորը գնահատումը ցույց է տալիս F60.8 կարգի բնավորության գծեր (զսպվածության պակաս, անհասունություն, ագրեսիա). F60.4 (ավելի շատ թատերական անհատականությանը բնորոշ բնավորության գծեր. զգացմունքային մակերեսություն, անկայունություն, եսասիրություն, այլ մարդկանց համար մտահոգվելու պակաս, ինքնահաստատման ձգտում, կորստի հետ հաշտվելու անկայունություն, միտում պաշտպանել իր եսը նույնիսկ եթե դա բարոյական վնաս է պատճառում): ...

Զգայապես անկայուն անհատականությունը (F60.3-ը համաձայն MKB-10-ի) բնութագրվում է միտումով դեպի հանկարծական մղումով գործելու բնավորությունը առանց հետևանքների մասին մտահոգվելու և անկանխատեսելի և փոփոխական տրամադրությամբ: ...

Թատերական անհատականության խանգարումը (F60.4) բնութագրվում է մակերեսային և անկայուն զգացմունքներով, ինքնատրեբզականությամբ,

զգացմունքային արտահայտությամբ, զգացմունքների չափազանցված արտահայտմամբ, առաջարկություններից դյուրին ազդվելով, եսակենտրոնությամբ, իր ցանկությունների և քմահաճույքների վրա կենտրոնացմամբ, այլ մարդկանց համար մտահոգվելու պակասով, հեշտ վիրավորվող զգացմունքներով և այլ մարդկանցից հավանության, ոգևորման և ուշադրության մշտական ձգտմամբ:

Խորհուրդ է տրվում պարտադիր հոգեկան բուժում ...

... »

17. 2006թ-ի սեպտեմբերի 22-ին Միսսկի տարածքային դատարանը Մ.Ջ.-ին և դիմումատուին ճանաչել է մեղավոր անձնական շահից դրդված կատարված երեք սպանությունների մեջ և դատապարտել է 40 տարի ազատազրկման: Վճռում նաև նշվել է, որ նրանք 960,000 խորվաթական կունայից ոչ պակաս գումար են վերցրել տուժողների տնից: Դիմումատուի դատապարտումը բացառապես հիմնվել է Մ.Ս.-ի կողմից տրված վկայության վրա: Վճռի համապատասխան հատվածում ասվում է.

«Առաջին մեղադրյալ Մ.Ջ.-ն ...

և

Երկրորդ մեղադրյալ Նեդո Աջդարիչը ...

մեղավոր են նրանում, որ

1. 1998թ-ի հոկտեմբերի 8-ի լույս 9-ի գիշերը, համաձայն անհայտ կնոջ հետ իրենց նախկին պայմանավորվածության, BJ 406BF պետհամարանիշի Peugeot 406 մեքենայով Կուտինա քաղաքի Ա.Ջ. Մատոս 23 փողոցի վրա գտնվող՝ Ռ.Ս.-ի, Ի.Ս.-ի և Ջ.Ս.-ի տուն հասնելուց և դրա մոտ մեքենան կայանելուց հետո, իմանալով, որ Ռ.Ս.-ն, Ի.Ս.-ն և Ջ.Ս.-ն մեծ գումար են պահում տանը, դուրս են եկել մեքենայից, որպեսզի սպանեն նրանց և



յուրացնեն նրանց գումարը, անհայտ կինը թաքնված մեքենայի մոտ հետևել է, որ ոչ ոք չգտնի նրանց: Նրանք անհայտ ձևով դռնով մտել են տուն, որում ապրելիս են եղել հանգուցյալ Ռ.Ս.-ն, Ի.Ս.-ն և Ջ.Ս.-ն, մոտեցել են Ջ.Ս.-ին, ով քնած է եղել իր անկողնում և մոտ 80 սանտիմետր հեռավորությունից Scorpion տեսակի հրազենից 7.65մմ տրամաչափի երկու գնդակ են կրակել Ջ.Ս.-ի գլխին՝ այդպիսով հասցնելով նրան գլխի երկու հրազենային վնասվածք ... որի արդյունքում նա միանգամից մահացել է: Հետո նրանք վերցրել և պահել են անհայտ չափի գումարը, բայց որը 960,000 խորվաթական կունայից պակաս չի եղել, և բաշխել են միմյանց միջև

...

2. տուն մտնելուց հետո առաջին կետում նշված հանցանքից անմիջապես հետո նրանք նույն վայրում և նույն ձևով 80 սանտիմետր հեռավորությունից Scorpion տեսակի հրազենից 7.65մմ տրամաչափի երկու գնդակ են կրակել Ռ.Ս.-ի գլխի վրա, ով քնած է եղել, ... որի արդյունքում նա միանգամից մահացել է: Հետո նրանք վերցրել և պահել են անհայտ չափի գումարը, բայց որը 960,000 խորվաթական կունայից պակաս չի եղել, և բաշխել են միմյանց միջև

...

3. երկրորդն կետում նկարագրված հանցանքից անմիջապես հետո նրանք նույն վայրում և նույն ձևով 80 սանտիմետր հեռավորությունից Scorpion տեսակի նշված հրազենից 7.65մմ տրամաչափի երկու գնդակ են կրակել Ի.Ս.-ի վրա, ով քնած է եղել, ... որի արդյունքում նա միանգամից մահացել է: Հետո նրանք վերցրել և պահել են անհայտ չափի գումարը, բայց որը 960,000 խորվաթական կունայից պակաս չի եղել, և բաշխել են միմյանց միջև



...

Եզրակացություն

...

Վկա Մ.Ս.-ն ասել է, որ կալանքի տակ է պահվել Բջելովարի բանտում, քանի որ դատապարտվել է 7 տարի ժամկետով ազատազրկման: Նրա դատապարտումը վերջնական չի եղել: Առողջական խնդիրների պատճառով նա տեղափոխվել է Զագրեբի բանտային հիվանդանոց: 2005թ-ի նոյեմբեր վերջերից մինչև 2006թ-ի հունվարի 13-ը նա մնացել է 206-րդ սենյակում: Նա առաջին անգամ հանդիպել է առաջին մեղադրյալին բանտային հիվանդանոցում: Նրանք միասին ժամանակ են անցկացրել և նա անմիջապես ասել է առաջին մեղադրյալին, թե ինչու է հայտնվել բանտում, բայց առաջին մեղադրյալը սկզբում չի ցանկացել հայտնի դարձնել իր կալանավորման պատճառը: Նա առաջին մեղադրյալի դատապաշտպանի հետ կապված վեճ է ունեցել: Մ.Ս.-ին դուր չեն եկել որոշ մեկնաբանություններ, որ արել է առաջին մեղադրյալը դատապաշտպանի առնչությամբ:

2005թ-ի դեկտեմբերի կեսերին երկրորդ մեղադրյալը (դիմումատուն) Ռեմետինեքի բանտից տեղափոխվել է նույն սենյակ: Մ.Ս.-ն նկատել է, որ առաջին և երկրորդ մեղադրյալներն այնպես են միմյանց ողջունել, որ կարծես թե վաղուց ճանաչել են միմյանց: Երկրորդ մեղադրյալի մահճակալը գտնվել է իր և առաջին մեղադրյալի մահճակալների միջև: Առաջին և երկրորդ մեղադրյալները շատ են միմյանց հետ զրուցել ... Մ.Ս.-ն իր մահճակալին պառկած լրագիր կարդալիս պատահմամբ լսել է նրանց զրույցները:

29



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
ներկայացուցչության օժանդակությամբ:

...

... նա այդ գրույցներից իմացել է, որ այդ երկուսը ճանաչել են միմյանց Բանջա Լուկայից: ... Առաջին և երկրորդ մեղադրյալները խոսել են բջջային հեռախոսի մասին և երկրորդ մեղադրյալը նաև ասել է, որ ինքը եկել է Կուտինայից ումն Ս.-ի հետ, և որ նրանք երկար ժամանակ սպասել են, որ ինչ-որ կին վերադառնա տուն: Նրանք ասել են, որ չեն իմացել, որ տանը երրորդ անձ է եղել:

Այս պատմություններից նա հասկացել է, որ բացի երեք անձանցից առաջին մեղադրյալի կինն էլ է ներգրավված եղել, և որ դա վերաբերել է փոխանակման գրասենյակի, որում աշխատել է առաջին մեղադրյալի մանկության ընկերը: Երկրորդ մեղադրյալը վախեցել է բացահայտվել և առաջին մեղադրյալն ասել է նրան, որ մի կին, որը հանդես է եկել որպես վկա, փոխել է իր վկայությունը հոգուտ իրենց: Երկրորդ մեղադրյալն ասել է առաջին մեղադրյալին, որ կվճարի նրա պաշտպանության համար ...

Նա նրանց գրույցներից իմացել է նաև, որ երկրորդ մեղադրյալը և առաջին մեղադրյալի կինը հատել են Բոսնիա և Հերցեգովինայի սահմանը Դավորում, քանի որ առաջին մեղադրյալի կինը պետք է առաջին մեղադրյալի բջջային հեռախոսը տաներ ետ Խորվաթիա, մինչդեռ Ս.-ն հատել է սահմանը Ստարա Գրադիսկայում: Փողը, ինչպես նաև բջջային հեռախոսները տարել են երկրորդ մեղադրյալը և առաջին մեղադրյալի կինը, մինչդեռ առաջին մեղադրյալը վերադարձել է Բջելովար: Նրանք տարել են բջջային հեռախոսները Բոսնիա և Հերցեգովինա, քանի որ անհրաժեշտ է եղել ազդանշաններ ուղարկել Բջելովար. ազդանշաններն ուղարկվել են Մոտաջիկա սարից և Վեսելի Բրիջեզից:

Առաջին և երկրորդ մեղադրյալները նաև քննարկել են առաջին մեղադրյալի խորը սառցարանում գտնված փողը, որը եղել է մոտավորապես 450,000 խորվաթական կունային համարժեք գումար, որը եղել է առաջին մեղադրյալի բաժինը: Այս զրույցները հիմնականում տեղի են ունեցել կեսօրին կամ երեկոյան, երբ բանտարկյալներին թույլատրվել է դիտել հեռուստացույց. առաջին և երկրորդ մեղադրյալները մնացել են սենյակում միայնակ և զրուցել: Ս.Ս.-ն հեռուստացույց դիտելու փոխարեն վերադարձել է սենյակ և հենց այդ ժամանակ է, որ լսել է նրանց զրույցները:

...

Ս.Ս.-ի վկայությունը, որում նա համոզիչ և տրամաբանական կերպով մանրամասն նկարագրում է, թե ինչ է լսել առաջին և երկրորդ մեղադրյալների զրույցներից, ցույց է տալիս, որ առաջին և երկրորդ մեղադրյալները կատարել են քննվող հանցանքը: Վկա Ս.Ս.-ն քննվող դեպքերի վերաբերյալ նշում է մի շարք մանրամասներ, որոնց մասին առաջին և երկրորդ մեղադրյալները խոսել են, ինչպես օրինակ կնոջ (Կ.Պ.)՝ տուն վերադառնալուն սպասելը, Բոսնիա և Հերցեգովինայից կատարված հեռախոսազանգերը, առաջին մեղադրյալի ավտոտնակի խորը սառցարանում փողը պահելը, և հանցանքի կատարման վայրում՝ տանը երրորդ անձի ներկայության հետ կապված զարմանքը (տանը Ի.Ս.-ի պատահական ներկայությունը, ով հետծննդաբերական արձակուրդի մեջ գտնվելիս է եղել այդ ժամանակ և իր ժամանակի մեծ մասն անցկացնելիս է եղել իր ծնողների տանը Վելիկա Գորիկայում): Վկա Ս.Ս.-ն իր վկայությունը տվել է երեք առիթներով. նրա վկայություններն իրենց հիմնական մասով նույնն են եղել և չէին կարող հորինված լինել, քանի որ նա նկարագրել է փոքր մանրամասներ կապված իրադարձություններից առաջ և հետո ընկած



ժամանակահատվածի հետ, որոնք համապատասխանում են հաստատված փաստերին:

Դատարանը նաև չի գտել որևէ պատճառ, թե ինչու Ս.Ս.-ն կվկայեր առաջին և երկրորդ մեղադրյալների դեմ, որոնց նա նախկինում չի ճանաչել և առաջին անգամ տեսել է Ջագրեբի բանտային հիվանդանոցում: Չի հաստատվել, որ նա որևէ շահ է ունեցել վկայություն տալու համար: Ս.Ս.-ի հոգեկան հետազոտման արդյունքների վերաբերյալ զեկույցը ցույց չի տալիս, որ նա ունի մտավոր հիվանդություն: Այն ցույց է տալիս, որ նրա մտավոր ունակությունների մակարդակը նորմալ է և ուստի նրա վկայության արժանահավատությունը որևէ կերպ կասկածի տակ չի դրվել: Ս.Ս.-ի դեմ հարուցված մեկ այլ քրեական գործում նա ճանաչվել է մասամբ ոչ հաշվետու իր գործողությունների համար, քանի որ հանցանքի կատարման պահին գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ: Այս հիմքով դատարանն ամբողջությամբ արժանահավատ է համարում Ս.Ս.-ի կողմից տրված ցուցմունքը:

Չնայած չկա քննվող հանցագործության մեջ երկրորդ մեղադրյալի մասնակցությունը հաստատող նյութեղեն ապացույց, և քանի որ նրա մասնակցությունը հայտնի է դարձել միայն 2006թ-ի սկզբին, կա Ս.Ս.-ի կողմից տրված վկայությունը, ով նշել է, որ երկրորդ մեղադրյալն է եղել քննվող քրեական հանցագործության կատարողը, և ով մանրամասն նկարագրել է երկրորդ մեղադրյալի մասնակցությունը: ...»

18. Իր բողոքում դիմումատուն նշել է, որ Ս.Ս.-ի տված ցուցմունքը արժանահավատ չէ նրա անհատականության խանգարման պատճառով և որ քննող դատավորի առջև և Դատարանում տված նրա ցուցմունքները եղել են հակասական և անտրամաբանական: Այսպես, նա ասել է, որ դիմումատուն և

Մ.Ջ.-ն գաղտնի գրույցներ են ունեցել և խոսել են ցածր ձայնով: Եթե գրույցները գաղտնի լինեին, ապա նրանք չէին վարի դրանք երրորդ անձի ներկայությամբ: Ինչ վերաբերում է նրանց մահճակալների դիրքին, քննող դատավորի առջև վկայություն տալիս Ս.Ս.-ն ասել է, որ Մ.Ջ.-ի կողմից զբաղեցրած մահճակալը եղել է մեջտեղում՝ դիմումատուի և վկայի մահճակալների միջև, մինչդեռ դատավարության ժամանակ նա ասել է, որ դիմումատուի կողմից զբաղեցրած մահճակալն է եղել մեջտեղում: Ինչ վերաբերում է դիմումատուի և Մ.Ջ.-ի միջև տեղի ունեցած ենթադրյալ գաղտնի գրույցների ժամին, Ս.Ս.-ն սկզբում նշել է, որ դրանք հիմնականում տեղի են ունեցել կեսօրին, իսկ 2006թ.-ի հունիսի 26-ին կայացած դատալսման ժամանակ նա ասել է, որ դրանք տեղի են ունեցել երեկոյան՝ ընթրիքից հետո: Անհավանական և ոչ համոզիչ է, որ այդպիսի լուրջ քրեական հանցագործություններ կատարած երկու անձինք այդ հանցանքների մանրամասները կքննարկեին մի երրորդ անձի ներկայությամբ: Ս.Ս.-ն նաև նշել է, որ մի կին, որը հանդիսացել է դատավարության մեղադրող կողմի գլխավոր վկան, փոխել է իր նախկին ցուցմունքը հոգուտ մեղադրյալի: Սակայն այդպիսի վկա չի եղել դատավարության ժամանակ: Նա նաև բազմիցս նշել է, որ Ս. ազգանունով մի մարդ նույնպես ներգրավված է եղել քննվող երեք անձանց սպանությունների մեջ: Սակայն այդ ազգանունով մարդն իրականում այդ սպանությունների տուժողներից մեկն է եղել: Ս.Ս.-ն անձամբ ուղղակիորեն տեղյակ չի եղել քննվող սպանությունների մասին: Դատավարության ժամանակ ցուցմունք տալիս նա անընդհատ կրկնել է հետևյալ բառերը. «Ես եզրակացրի»: Ուստի այդ վկայությունը չի կարող հիմք հանդիսանալ դիմումատուի դատապարտման համար: Վկան գործին է կցել իր այսպես կոչված «նշումները», որոնք ենթադրվում է, որ արվել են իր և Մ.Ջ.-ի միջև տեղի ունեցած գրույցների



ժամանակ: Սակայն այդ նշումները անիմաստ բառերի շարան են: Նրա ցուցմունքը հակասում է նույն սենյակի բանտարկյալներ Ջ.Մ.-ի և Ն.Փ.-ի ցուցմունքներին: Ավելին, նրա ամբողջ պատմածը զուրկ է եղել տրամաբանությունից, և նա (դիմումատուն) անգամ չի եղել Խորվաթիայում 1998թ-ին, այլ բնակվելիս է եղել Բոսնիա և Հերցեգովինայի Բանջա Լուկա քաղաքում, որտեղ նա վարել է իր սեփական բիզնեսը 1990թ-ից ի վեր: Նա նշել է, որ նախկինում Մ.Ջ.-ին երբեք չի տեսել: Եվ վերջապես, նյութեղեն ապացույցները, որոնք գտել են այն տանը, որտեղ կատարվել են սպանությունները, ոչ մի կապ չեն ունեցել նրա հետ: Դիմումատուն պնդել է, որ գործը քննող դատարանի եզրակացությունները եղել են այն աստիճանի կամայական, որ դեմ են եղել ողջախոհությանն ու արդար դատաքննության հիմնական պահանջներին:

19. Առաջին ատյանի դատարանի վճիռը հաստատվել է Գերագույն դատարանի կողմից մարտի 14-ին: Վճռի համապատասխան հատվածում նշված է.

«Մեղադրյալներ Մ.Ջ.-ն և Նեդո Աջդարիչն իրենց համապատասխան բողոքներում անհաջող կերպով փորձել են վիճարկել վկա Ս.Ս.-ի տված ցուցմունքը: Սակայն, ի հակադրություն նրանց պնդումների, առաջին ատյանի դատարանը վավեր հիմքեր է տվել այդ վկայի կողմից տրված ցուցմունքը ընդունելու համար, և այդ հիմքերը կասկածի տակ չեն դրվել իրենց բողոքների մեջ առկա մեղադրանքներով:

Նախ պետք է նշել, որ վկա Ս.Ս.-ի վկայությունը չի հակասում մյուս ցուցմունքներին, ինչպես սխալմամբ պնդում էին բողոքարկողները: Վկաներ Ջ.Մ.-ն և Ն.Փ.-ն, ովքեր տվել են Ջագրերի բանտային հիվանդանոցի սենյակի հանգամանքների ավելի շատ մանրամասներ, քան Թ.Մ.-ն, ասել են, որ մեղադրյալներ Մ.Ջ.-ն և Նեդո Աջդարիչը ավելի շատ ժամանակ են անցկացրել



իրար հետ, քան մյուս բանտարկյալների հետ, որով նրանք վիճարկել են մեղադրյալի կողմից առաջ բերված պաշտպանությունը, մասնավորապես Աջդարիչի մեղադրանքը, որ նա խոսել է Մ.Ջ.-ի հետ ավելի քիչ, քան մյուս բանտարկյալների հետ: Փաստը, որ մյուս բանտարկյալները չեն լսել Ս.Ս.-ի կողմից նկարագրված գրույցները, կասկածի տակ չի դնում նրա վկայության այդ մասը, քանի որ վկա Ջ.Մ.-ն ասել է, որ պարբերաբար հեռուստացույց է դիտել, որ Մ.Ջ.-ն հիմնականում մնացել է սենյակում Աջդարիչի հետ, և որ Ս.Ս.-ն, ով երբեմն է դիտել հեռուստացույց, շուտ վերադարձել է սենյակ: Այսպիսով, վկա Ս.Ս.-ն, ինչպես որ անուղղակիորեն ցույց է տրվում վկա Ջ.Մ.-ի վկայության մեջ, հաճախ հնարավորություն է ունեցել միայնակ մնալ սենյակում մեղադրյալի հետ այն ժամանակ, երբ մյուս բանտարկյալները հեռուստացույց դիտելիս են եղել, և ի վիճակի է եղել լսել գաղտնի գրույցները, որոնք նրանք ակնհայտորեն ունեցել են այդ ժամանակ:

Մեղադրյալ Մ.Ջ.-ն պնդում է իր բողոքի մեջ, որ անհավանական է, որ այդպիսի հանցագործություններ կատարողները 7 տարի անց հանդիպեն միմյանց Ջագրեբի բանտային հիվանդանոցում, և եթե նույնիսկ հանդիպելին, ապա բացառվում է, որ կքննարկելին քննվող հանցագործությունները երրորդ անձի ներկայությամբ: Այդպիսի պահվածքը բնորոշ չէ անձանց, ովքեր հմտորեն դավադրություն են կազմակերպել և ծրագրել երեք անձանց սպանություն: Նա նաև պնդել է, որ երկար ժամանակ է անցել, և նա արդեն իսկ հնարավորություն ունեցած կլիներ այդ ընթացքում քննարկել այդ հանցագործություններն իր հանցակիցների հետ:

Այնուամենայնիվ այս դատարանը գտնում է, որ նույն սենյակում պատահաբար տեղավորելը անձանց, ովքեր միասին քրեական հանցագործություն են կատարել, չի կարող համարվել անհնարին: Մեղադրյալ Աջդարիչը



կալանավորվել է քրեական հանցագործության համար, որը կապված չէ այս դատավարության քննվող գործի հետ, և տեղափոխվել է Ջագրեբի բանտային հիվանդանոց, որը ունի միայն մի քանի հիվանդասենյակ յուրաքանչյուր բաժանմունքում: Այդ ժամանակ նա դեռ Մ.Ջ.-ի դեմ հարուցված քրեական գործի առարկա քրեական հանցագործությունների առնչությամբ կասկածյալ չի եղել, ուստի նրանց միևնույն սենյակում տեղավորելու ոչ մի պաշտոնական խոչընդոտ չի եղել:

Մյուս կողմից, չնայած մեղադրյալ Մ.Ջ.-ն իսկապես 2000թ-ից (երբ նա ազատվել է կալանքից) մինչև 2005թ-ը (երբ նա նորից կալանավորվել է) հինգ տարի ժամանակ է ունեցել, ակնհայտ է, որ քանի որ նրան արդարացնելու՝ առաջին աստիճանի դատարանի որոշումը բողոքարկվել է (այսինքն՝ նրա դեմ հարուցված քրեական գործը դեռևս առկա էր), նա պատճառ ուներ խուսափելու իր հանցակցի՝ մեղադրյալ Աջդարիչի հետ հրապարակային և հաճախակի հանդիպումներից: Եվ վերջապես, ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք մեղադրյալներն այդ ժամանակահատվածում տեսել են իրար և քննարկել քրեական հանցագործությունները, որ կատարել են, ակնհայտ է, որ այն բանից հետո, երբ Մ.Ջ.-ի արդարացման դատավճիռը բեկանվել է, և նա կալանավորվել է, այս նոր հանգամանքների և հարուցված գործի պայմաններում նրանք քննարկելու բան են ունեցել Ջագրեբի բանտային հիվանդանոցում մնալու ժամանակ:

Մեղադրյալների միջև կայացած զրույցների՝ Ս.Ս.-ի նկարագրությունը ո՛չ անհամոզիչ, ո՛չ էլ անտրամաբանական է. մեղադրյալներ Ջ.-ն և Աջդարիչը, ինչպես նկարագրել է Ս.Ս.-ն, վարել են այդ զրույցները, երբ մյուս բոլոր բանտարկյալները կամ գոնե նրանց մեծ մասը եղել են բացակա, այսինքն՝ նրանք զրուցել են հնարավորինս գաղտնի պայմաններում: Ակնհայտ է, որ վկա



Ս.Ս.-ն չի լսել մեղադրյալների զրույցների բոլոր մանրամասները, քանի որ նրանք ցածր ձայնով են խոսել քննվող քրեական հանցագործությունների մասին: Դա է հենց պատճառը՝ ինչու վկա Ս.Ս.-ի կողմից տրված վկայության մասերը, որոնցում նա վերակառուցել է այդ զրույցների բովանդակությունը այդ զրույցների իր լսած պատառիկների հիմքի վրա, չեն համապատասխանում այլ վկայությունների հիման վրա հաստատված փաստերին: Ուստի Ս.Ս.-ն ակնհայտորեն սխալ է հասկացել Ս.-ի դերը, ում հիշատակել է մեղադրյալը: Այնուամենայնիվ, եթե Ս.Ս.-ի ցուցմունքը կեղծ լիներ, ինչպես մեղադրյալ Մ.Ջ.-ն էր պնդել իր բողոքի մեջ, և հիմնված լիներ լրագրերից վերցրած փաստերի վրա, նա հաստատ չէր հիշատակի Ս.-ին նույն համատեքստում, քանի որ սա ցույց չի տրվել նախորդ վարույթում:

Հակառակ մեղադրյալ Մ.Ջ.-ի բողոքում առկա մեղադրանքներին՝ վկա Ս.Ս.-ն երեք առիթներով ցուցմունք տալիս վերարտադրել է մեղադրյալների զրույցների բառերն ու նախադասությունները հարաբերական մանրամասներով, և նրա վկայության մեջ առկա որոշակիորեն անտրամաբանական մանրամասները, որոնք շեշտվել են մեղադրյալ Նեդո Աջդարիչի բողոքում իրականում հակասում են բողոքում նշված այն փաստարկին, որ նրա վկայությունը հորինված է եղել, և վկան հետևել է հրահանգների, նրան ասվել է, թե ինչ պետք է ասի: Մեղադրյալը չի մանրամասնել, թե ով է ենթադրաբար հրահանգներ տվել վկային, և թե դա ում շահից կրիներ: Եվ վերջում ինչ վերաբերում է այն հարցին, թե արդյոք վկան հորինել է իր ցուցմունքը և անգիր արել այն համաձայն ինչ-որ մեկի հրահանգների, ապա կակնկալվեր, որ անգիր արված վկայությունը ամբողջությամբ համաձայնության մեջ լիներ մյուս ցուցմունքների հետ: Այնինչ այն ճիշտ հակասում է դրանց որոշ իրադարձությունների առումով (վկա Ս.Ս.-ի



մեղադրանքները Բոսնիայից բջջային հեռախոսով կատարված զանգի մասին, Ս.-ի մասնակցությունը և այլ նման բաներ), որոնք ցույց են տալիս, որ նրա վկայությունը չի հորինվել, և որ նա չի հետևել հրահանգների:

Մեղադրյալը նաև անդրադարձել է վկա Ս.Ս.-ի բնավորությանը և շեշտել նրա հոգեկան վիճակի վերաբերյալ՝ նրա դեմ հարուցված վարույթի ընթացքում կազմած եզրակացության այն մասին, որտեղ նշված է, որ նա ունի թատերական անհատականության խանգարում, որի հիման վրա մեղադրյալը եզրակացրել է, որ նրա մեջ պատմություններ հորինելու հակվածություն կա: Սակայն մեղադրյալը անտեսել է մյուս եզրակացությունները, համաձայն որոնց Ս.Ս.-ի մտավոր կարողությունները նորմալ սահմաններում են և մտավոր հիվանդության նշույլներ չկան:

Համաձայն վերոհիշյալի վկա Ս.Ս.-ի հոգեկան վիճակի հավելյալ հետազոտության կարիք չկա»:

20. 2007թ-ի օգոստոսի 28-ին Գե ր ա գ ու լ յ և դ ա տ ա ր ա ն ը որպես երրորդ ատյանի դատարան նորից անփոփոխ է թողել դիմումատուի դատապարտումը:

Վճռի համապատասխան հատվածում ասվում է.

«Հակառակ երկու մեղադրյալների բողոքներում առկա մեղադրանքների՝ Խորվաթիայի Հանրապետության Գե ր ա գ ու լ յ և դ ա տ ա ր ա ն ը, հանդես գալով որպես երրորդ ատյանի դատարան, գտնում է, որ երկրորդ ատյանի դատարանը ճիշտ է վարվել, երբ գտել է, որ առաջին ատյանի դատարանը մանրամասն վերլուծել և գնահատել է վկա Ս.Ս.-ի վկայությունը, ով որոշ ժամանակ է անցկացրել երկու մեղադրյալների հետ Ջագրեբի բանտային հիվանդանոցում: Ի տարբերություն մյուս բանտարկյալների՝ վկա Ս.Ս.-ն հաճախ միայնակ է մնացել մեղադրյալների հետ և կարողացել է լսել նրանց գաղտնի զրույցները, որը համապատասխանում է Ջ.Մ.-ի և Ն.Փ.-ի տված



ցուցմունքներին, որոնք նույնպես վկայություն են տվել Ջագրեբի բանտային հիվանդանոցում տեղի ունեցածի վերաբերյալ, և որոնց վկայությունների վրա են հիմնվել երկու մեղադրյալները իրենց բողոքներում: Նրանք, ինտեր ալիա, ասել են, որ մեղադրյալներն ավելի շատ ժամանակ են անցկացրել միմյանց հետ, քան մյուս բանտարկյալների հետ, որով նրանք հերքել են մեղադրյալների պաշտպանական փաստարկները, մասնավորապես՝ Նեդո Աջդարիչինը, ով ասել է, որ ամենաքիչն է խոսել մեղադրյալ Մ.Ջ.-ի հետ: Վկա Ջ.Մ.-ը նույնպես հաստատել է, որ մեղադրյալները և վկա Ս.Ս.-ն պարբերաբար չեն դիտել հեռուստացույց, քանի որ մեղադրյալ Մ.Ջ.-ն հիմնականում մնացել է սենյակում, մինչդեռ մեղադրյալ Նեդո Աջդարիչը և վկա Ս.Ս.-ն երբեմն են միայն դիտել հեռուստացույց»:

21. 2008թ-ի փետրվարի 20-ին Ջագրեբի համայնքային քրեական դատարանը դիմումատուին արդարացրել է մեքենայի գողության մեղադրանքում:

22. Դիմումատուի սահմանադրական բողոքը, որը ներկայացվել է քրեական վարույթի առնչությամբ, որի արդյունքում նա ճանաչվել է մեղավոր երեք սպանությունների համար, մերժվել է 2008թ-ի հունիսի 24-ին: Որոշումը ներկայացվել է դիմումատուի դատապաշտպանին 2008թ-ի սեպտեմբերի 15-ին: Սահմանադրական դատարանի որոշման համապատասխան մասում ասվում է.

«Արդար դատաքննության սահմանադրական իրավունքը վերաբերում է միայն վարույթային երաշխիքներին: Այդ տեսանկյունից Սահմանադրական դատարանը քննում է դատավարության մեջ հնարավոր վարույթային խախտումները և դրա վրա հիմնված, դիտարկելով դատավարությունը որպես մի ամբողջություն, գնահատում է՝ արդյոք դատավարությունը անց է կացվել այնպիսի ձևով, որը երաշխավորում է արդար դատաքննություն:

Քննվող գործում դիմումատուի մեղքը հաստատվել է քրեական գործի քննությունում առաջին ատյանի դատարանի առջև ապացույցը ներկայացնելուց հետո : Դիմումատուին իրավաբանորեն ներկայացրել են, և նա հնարավորություն է ունեցել հետևել դատավարությանը, մեկնաբանություններ անել, վճռորոշ փաստերի վերաբերյալ ապացույցներ պահանջել, ինչպես նաև իրականացնել բոլոր օրինական վարույթային գործողությունները: Առաջին ատյանի դատարանը նշել է ապացույցները, որոնք ներկայացվել են նրա առջև և ապացույցները, որոնց վրա այն հիմնվել է եզրակացնելիս, որ դիմումատուն կատարել է քննվող քրեական հանցագործությունը: Առաջին ատյանի դատարանը վերլուծել է գործին առնչվող բոլոր ապացույցներն ու փաստերը որոշելու համար մարդասպանության առկայությունը և իր եզրակացությունների համար վավեր իրավական հիմքեր է ներկայացրել:

Արդար դատաքննության երաշխիքները պահանջում են, որ դատավարությունը դիտվի որպես ամբողջություն (այսինքն՝ դատավարությունը, որը անց է կացվել Սիսակի տարածքային դատարանում, ինչպես նաև 2 դատավարությունները, որոնք անց են կացվել Գերագույն դատարանում, պետք է դիտվեն որպես մեկ ամբողջական դատավարություն) և որ գնահատական տրվի՝ արդյոք դատավարությունը անց է կացվել այնպիսի ձևով, որը երաշխավորում է դիմումատուին արդար դատաքննություն:

Վերանայելով Գերագույն դատարանի՝ 2007թ-ի օգոստոսի 28-ին կայացրած վճիռը՝ Սահմանադրական դատարանը չի գտել որևէ հանգամանք, որը ցույց կտար, որ այդ վճիռը որևէ կերպ խախտել է դիմումատուի՝ արդար դատաքննության իրավունքը»:

3. Գործին առնչվող այլ փաստաթղթեր

23. Դիմումատուն ներկայացրել է Ս.Ս.-ի բժշկական հետազոտության արդյունքների վերաբերյալ զեկույցը, որը կազմվել է 1996թ-ի հունիսի 2-ին Խորվաթիայի թոշակի և հաշմանդամության հիմնադրամի հաշմանդամության կոմիտեի կողմից: Ջեկույցի համապատասխան հատվածում ասվում է. «Ապահովագրված անձը 1994թ-ի փետրվարի 16-ից ի վեր եղել է Խորվաթիայի բանակի անդամ: 1991թ-ի օգոստոսի 18-ին Գրուբիսնո Պոլյեում տեղի ունեցած զինված բախման ժամանակ նա կոտրել է ոտքը և բացի այդ դրանից հետո ձեռք է բերել լսողական խնդիր: 1993թ-ին նա վիրավորվել է պայթյունի արդյունքում ... Վիրավորը տառապում է լսողական խանգարումով, որը ստացել է պայթյունի հետևանքով ... »:

Օրենսդրությունը

I. Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ենթադրյալ խախտումները

24. Դիմումատուն բողոքել է, որ երեք սպանությունների գործով իր դատապարտումը բացառապես հիմնվել է մի վկայի ասեկոսե ապացույցի վրա, որը տառապել է զգացմունքային անկայունությամբ և թատերական անհատականության խանգարմամբ, և որ դատապարտումը ամբողջությամբ կամայական է և դեմ է արդար դատաքնության երաշխիքներին, անմեղության կանխավարկածի իրավունքին և կողմերի հավասարության սկզբունքին: Նա հիմնվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի վրա, որոնցում ասվում է.

«1. Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք: Դատավճիռը հրապարակվում է դռնբաց նիստում, սակայն մամուլի ներկայացուցիչների և հանրության ներկայությունը կարող է չթույլատրվել ամբողջ դատաքննության կամ նրա մի մասի ընթացքում՝ ժողովրդավարական հասարակության մեջ բարոյականության, հասարակական կարգի կամ պետական անվտանգության շահերից ելնելով, երբ դա են պահանջում անչափահասների շահերը կամ կողմերի մասնավոր կյանքի պաշտպանությունը, կամ՝ այնքանով, որքանով դա, դատարանի կարծիքով, հատուկ հանգամանքների բերումով խիստ անհրաժեշտ է, եթե հրապարակայնությունը կխախտեր արդարադատության շահերը:

2. Յուրաքանչյուր ոք, ով մեղադրվում է քրեական հանցագործություն կատարելու մեջ, համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ օրենքին համապատասխան:

3. Քրեական հանցագործություն կատարելու մեջ մեղադրվող յուրաքանչյուր ոք ունի հետևյալ նվազագույն իրավունքները.

ա. իրեն հասկանալի լեզվով անհապաղ ու հանգամանորեն տեղեկացվելու իրեն ներկայացված մեղադրանքի բնույթի և հիմքի մասին,



բ. բավարար ժամանակ ու հնարավորություններ՝ իր պաշտպանությունը նախապատրաստելու համար,

գ. պաշտպանելու իրեն անձամբ կամ իր ընտրած դատապաշտպանների միջոցով կամ, եթե նա բավարար միջոցներ չունի դատապաշտպանի ծառայության դիմաց վճարելու համար, ունենալու անվճար նշանակված դատապաշտպան, երբ դա պահանջում են արդարադատության շահերը,

դ. հարցաքննելու իր դեմ ցուցմունք տվող վկաներին կամ իրավունք ունենալու, որ այդ վկաները ենթարկվեն հարցաքննության, և իրավունք ունենալու՝ իր վկաներին կանչելու ու հարցաքննելու միևնույն պայմաններով, ինչ իր դեմ ցուցմունք տված վկաները,

ե. օգտվելու թարգմանչի անվճար օգնությունից, եթե ինքը չի հասկանում դատարանում գործածվող լեզուն կամ չի խոսում այդ լեզվով»:

A. Թույլատրելիությունը

25. Կառավարությունը պնդել է, որ դիմումը ներկայացվել է վեցամսյա ժամկետից դուրս: Այն նշել է, որ Դատարանի կնիքը դիմումի վրա կրել է մարտի 30, 2009թ. ամսաթիվը, մինչդեռ սույն գործով վերջնական որոշումը, որն ընդունվել է 2008թ-ի հունիսի 24-ին Սահմանադրական դատարանի կողմից, ներկայացվել է դիմումատուի դատապաշտպանին 2008թ-ի սեպտեմբերի 15-ին:
26. Դիմումատուն պնդել է, որ իր դիմումը ներկայացվել է 2009թ-ի մարտի 13-ին:
27. Դատարանը նշում է, որ փոստային կնիքը, որը դրվել է ծրարի վրա, որում ուղարկվել է դիմումը, կրում է 2009թ-ի մարտի 13 ամսաթիվը: Դրանից հետևում է, որ սույն դիմումը ներկայացվել է ներպետական դատարանի



վերջնական որոշումը դիմումատուին ներկայացնելուն հաջորդած վեցամսյա ժամկետում:

28. Դատարանը նաև նշում է, որ դիմումը ակնհայտորեն անհիմն չէ Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3 (ա) կետի առնչությամբ: Այն նաև նշում է, որ դիմումը անթույլատրելի չէ որևէ այլ հիմքով: Ուստի այն պետք է թույլատրելի համարել:

B. Գործի հանգամանքներ

1. Կողմերի փաստարկները

29. Դիմումատուն պնդել է, որ 1998թ-ին Կուտինայում տեղի ունեցած երեք անձանց սպանություններում իր ներգրավվածության հարցի վերաբերյալ ազգային դատարանների եզրակացությունները եղել են այն աստիճանի կամայական, որ դեմ են եղել արդար դատաքնության հիմնական երաշխիքներին: Նա շեշտել է, որ իր դատապարտումը բացառապես հիմնվել է ասեկոսե ապացույցի վրա, որը ներկայացվել է մտավոր հիվանդ անհատի կողմից, և որ այդ ապացույցը որևէ կերպ չի հիմնավորվել: Այս առնչությամբ նա նշել է, որ հանցագործության վայրում գտնված որոշ դատական ապացույցներ և մատնահետքեր ոչ մի կերպ կապված չեն իր հետ: Ավելին, իր դեմ հարուցված քրեական գործով դատավարության ժամանակ իր կողմից բարձրացված մի շարք առարկություններին ազգային դատարանները պատշաճ պատասխաններ չեն տվել:

30. Կառավարությունը պնդել է, որ վկա Ս.Ս.-ն տվել է նույն վկայությունը թե՛ ոստիկանության, թե՛ քննող դատավորի և թե՛ երկու անգամ դատավարության ժամանակ: Դիմումատուն հնարավորություն է ունեցել հարցեր առաջադրել վկային և կազմել ապացույցների իր ցանկը: Դատավարության ընթացքում ավելի քան երեսուն վկայի են լսել և տարբեր փորձագիտական



վերլուծություններ են արվել: Ազգային դատարանները պատշաճ կերպով հիմնավորել են դիմումատուի դատապարտումը:

31. Ինչ վերաբերում է Ս.Ս.-ին, Կառավարությունը նշել է, որ լսողական խանգարման պատճառով չէ, որ Ս.Ս.-ն թոշակի է անցել:

2. Դատարանի գնահատականը

(a) Ընդհանուր սկզբունքներ

32. Դատարանը շեշտում է, որ իր պարտականությունների մեջ չի մտնում ներպետական դատարաններին փոխարինելը, որոնք կարող են լավագույնս գնահատել իրենց առջև ներկայացված ապացույցները, հաստատված փաստերը և մեկնաբանել ներպետական օրենսդրությունը: Դատարանը սկզբունքորեն չի միջամտի, քանի դեռ ներպետական դատարանների վճիռը չի թվա կամայական կամ ակնհայտորեն անհիմն և եթե դատավարությունն ամբողջությամբ վերցրած է ի Լ ի Ս ի արդար, ինչպես որ պահանջում է 6-րդ հոդվածի 1-ին կետը (տե՛ս, մուտատիս մուտանդիս, Վան Կուկն ընդդեմ Գերմանիայի գործով վճիռը, թիվ 35968/97, կետեր 46-47, ՄԻԵԴ 2003-VII և Խամիդովն ընդդեմ Ռուսաստանի գործով վճիռը, թիվ 72118/01, կետ 170, ՄԻԵԴ 2007-XII (քաղվածքներ)):

33. Դատարանը նաև ընդգծում է, որ Կոնվենցիայի այն սկզբունքի տեսանկյունից, որն ուղղված է երաշխավորելու ոչ թե տեսական կամ պատրանքային իրավունքներ, այլ իրավունքներ, որոնք գործնական են և արդյունավետ (տե՛ս Արտիկոն ընդդեմ Իտալիայի, մայիսի 13, 1980թ., կետ 33, շարք Ա թիվ 37) արդար դատաքննության իրավունքը չի կարող դիտվել արդյունավետ, քանի դեռ կողմերի պահանջներն ու դիտարկումներն իսկապես չեն «լավում», այսինքն՝ ինչպես հարկն է չեն քննվում դատարանի կողմից (տե՛ս Դուլորանսն ընդդեմ Ֆրանսիայի գործով վճիռը, թիվ 34553/97, կետ 33, մարտ 21, 2000թ.



Դոնաձեն ընդդեմ Վրաստանի գործով վճիռը, թիվ 74644/01, կետեր 32 և 35, մարտի 7, 2006թ. և Դիման ընդդեմ Ռուսիայի գործով վճիռը, թիվ 58472/00, կետ 34, նոյեմբերի 16, 2006թ.):

34. Բացի այդ, համաձայն Դատարանի կողմից հաստատված նախադեպային իրավունքի, որն արտացոլում է արդարադատության պատշաճ իրականացման հետ կապված սկզբունքը, դատարանները պետք է պատշաճ ձևով ներկայացնեն իրենց վճռի հիմքերը: Հիմքեր ներկայացնելու պարտականության իրականացման աստիճանը տարբերվում է՝ պայմանավորված որոշման բնույթով և պետք է որոշվի՝ հաշվի առնելով գործի հանգամանքները (տե՛ս Գարսիա Ռուիզն ընդդեմ Իսպանիայի գործով վճիռը, թիվ 30544/96, կետ 26, ՄԻԵԴ 1999-I, հետագա հղումներով):
35. Դատարանը նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածով նախատեսված տարբեր հարցերին առնչվող քրեական գործերում նշել է, որ ապացուցման բեռն ընկած է մեղադրող կողմի վրա, և որ ցանկացած կասկած գործում է հոգուտ մեղադրյալի (տե՛ս, մուտատիս մուտանդիս, Բարբերան, Մեսեզեն և Ջաբարդոն ընդդեմ Իսպանիայի դեկտեմբերի 6, 1988թ, կետ 77, շարք Ա, թիվ 146. Լավենցն ընդդեմ Լատվիայի, թիվ 58442/00, կետ 125, նոյեմբերի 28, 2002թ. և Մելիչը և Բեկն ընդդեմ Չեխիայի Հանրապետության, թիվ 35450/04, կետ 49, հուլիսի 24, 2008թ.):

Բ) Այս սկզբունքների կիրառումը սույն գործում

36. Ի սկզբանե դատարանը նշում է, որ դիմումատուն մեղավոր է ճանաչվել երեք սպանությունների համար, որոնք կատարվել են անձնական շահից դրդված, և դատապարտվել է 40 տարի ազատազրկման բացառապես Ս.Ս.-ի կողմից տրված վկայության հիման վրա: Ազգային դատարանները հստակորեն նշել են, որ որևէ այլ ապացույց չի եղել, որը ցույց կտար դիմումատուի



մասնակցությունը երեք անձանց քննվող սպանությունների մեջ (տե՛ս վերը՝ կետ 17):

37. Ինչ վերաբերում է որպես այդպիսին Ս.Ս.-ի տված ցուցմունքին, Դատարանը նշում է հետևյալը.

38. Ս.Ս.-ի հոգեվիճակի գնումը, որն արվել է սպանության մեղադրանքով նրա դեմ հարուցված քրեական գործի համար, ցույց է տալիս, որ նրա անհատականությունը զգայապես անկայուն է և թատերական խանգարման բնորոշ գծեր ունի (մանրամասների համար տե՛ս վերը՝ կետ 16): Ս.Ս.-ին պարտադիր հոգեկան բուժման կուրս է նշանակվել, որը նա չի անցել, քանի որ Ս.Ս.-ն վկայություն տալիս ասել է, որ երբեք չի բուժվել հոգեբույժի կողմից (տե՛ս վերը՝ կետ 10):

39. Ս.Ս.-ի վկայությունը բացառապես վերաբերել է դիմումատուի և Մ.Ջ.-ի ենթադրյալ գաղտնի գրույցներին, որոնք արվել են ցածր ձայնով: Սակայն ըստ Մ.Ջ.-ի միայն ինքն է ասել Ս.Ս.-ին, թե ինչու է մեղադրվում (տե՛ս վերը՝ կետ 13):

40. Դատարանը նաև նշում է, որ Ս.Ս.-ի վկայության այն մասը, որը վերաբերում է դիմումատուի ներգրավվածությանը երեք անձանց սպանությունների մեջ, որոնցում նա մեղադրվել է, եղել է ոչ ճիշտ և ոչ հստակ և ավելի շատ ներկայացրել է նրա եզրահանգումները, քան կոնկրետ փաստեր: Երբ վկային հարցրել են, թե կոնկրետ ինչ են ասել դիմումատուն և Մ.Ջ.-ն, նա պատասխանել է, որ չի կարող դա անել, և որ այն, ինչ ինքն ասել է դատարանին, իր եզրակացություններն են նրանց գրույցների վերաբերյալ (տե՛ս վերը՝ կետ 10):

41. Ավելին, Ս.Ս.-ը վեճեր է ունեցել թե՛ Մ.Ջ.-ի և թե՛ դիմումատուի հետ: Մ.Ջ.-ի հետ վեճը վերաբերել է փաստաբանին, ով ներկայացրել է և՛ Մ.Ջ.-ին, և՛ Ս.Ս.-

ին իրենց դեմ հարուցված քրեական գործերում, իսկ դիմումատուի հետ վեճը վերաբերել է Հարավսլավիայի ժողովրդական բանակի սպային: Նա նաև արտահայտել է իր նախապաշարմունքները դիմումատուի նկատմամբ որպես օտարազգի և կասկածներն առ այն, թե ինչպես է դիմումատուն դարձել «հարուստ» (տե՛ս վերը՝ կետ 12):

42. Մ.Ս.-ի ցուցմունքները միաժամանակ նաև հակասական են: Գործը քննող դատարանում 2006թ-ի ապրիլի 4-ի դատալսմանը վկայություն տալիս նա ասել է, որ «Վեսելի Բրիջեզ» կոչվող տարածքը, որտեղից ենթադրվում է, որ ազդանշաններ են ուղարկվել բջջային հեռախոսից, գտնվել է Բոսնիա և Հերցեգովինայի Բանջա Լուկա կոչվող քաղաքի մոտ, մինչդեռ 2006թ-ի հունիսի 26-ի դատալսմանը նա ասել է, որ նույն տարածքը գտնվում է Խորվաթիայի Կուտինա քաղաքի մոտ: 2006թ-ի ապրիլի 4-ին նա ասել է, որ դիմումատուի և Մ.Ջ.-ի զրույցները հիմնականում տեղի են ունեցել կեսօրին, մինչդեռ 2006թ-ի հունիսի 26-ին տված իր վկայության մեջ նա ասել է, որ երկու մեղադրյալները հիմնականում միասին ժամանակ են անցկացրել երեկոյան՝ ընթրիքից հետո:

43. Ինչ վերաբերում է բացատրությանը, թե երբ են ինքը, Մ.Ջ.-ն և դիմումատուն հասել Ջագրեբի բանտային հիվանդանոց, Մ.Ս.-ն 2006թ-ի մարտի 3-ին տված իր առաջին վկայության մեջ ասել է, որ ինքը հասել է 2005թ-ի նոյեմբերի 23-ին, Մ.Ջ.-ն՝ դրա հաջորդ օրը և դիմումատուն՝ 5 կամ 6 օր հետո: 2006թ-ի ապրիլի 4-ին տված վկայության մեջ նա ասել է, որ ինքը հասել է «2005թ-ի նոյեմբերի վերջերին», Մ.Ջ.-ն՝ «2005թ-ի դեկտեմբերին», բայց չի հիշում, թե կոնկրետ որ օրը և դիմումատուն՝ «2005թ-ի դեկտեմբերի կեսերին»: 2006թ-ի հունիսի 26-ին տված վկայության մեջ նա ասել է, որ ինքը հասել է «2005թ-ի նոյեմբերի կեսերին», Մ.Ջ.-ն՝ «իրենից հետո» և դիմումատուն՝ «10 օր հետո»: Բացի բավականին պարզ այս հարցի շուրջ առկա այս



անհամապատասխանություններից դա բոլորովին չի համընկնում դիմումատուի ժամանման իրական ամսաթվի հետ, որը 2005թ-ի դեկտեմբերի 29-ն է:

44. Քննող դատավորի առջև 2006թ-ի մարտի 3-ին տված իր վկայության մեջ Ս.Ս.-ն ասել է, որ Մ.Ջ.-ի կողմից զբաղեցրած մահճակալը եղել է մեջտեղում՝ իր և դիմումատուի մահճակալների միջև, մինչդեռ 2006թ-ի ապրիլի 4-ի և հունիսի 26-ի դատալսմանը տված վկայության մեջ նա ասել է, որ դիմումատուի մահճակալն է եղել մեջտեղում: Մյուս վկաները՝ Ջ.Մ.-ն և Ն.Փ.-ն, ովքեր այդ կարևոր ժամանակահատվածում տեղափոխված են եղել Ջագրերի բանտային հիվանդանոցի նույն սենյակ, ասել են, որ դիմումատուի կողմից զբաղեցրած մահճակալը եղել է մյուս մահճակալներից առանձնացված և հեռու է գտնվել Ս.Ս.-ի կողմից զբաղեցրած մահճակալից:

45. Ս.Ս.-ն բազմիս նաև նշել է, որ Ս. Ազգանունով մի մարդ նույնպես ներգրավված է եղել երեք անձանց քննվող սպանության մեջ: Սակայն այդ ազգանունով անձն իրականում եղել է այդ սպանության տուժողներից մեկը: Նա նաև ասել է, որ կարևոր վկա հանդիսացող կինը փոխել է իր վկայությունը հոգուտ մեղադրյալի: Սակայն դիմումատուի դեմ հարուցված քրեական գործի քննման ժամանակ ոչ մի այդպիսի վկա չի եղել:

46. Բոլոր այս անհամաձայնությունները ստիպեցին ներպետական դատարաններին ավելի ուշադիր գնահատել գործը: Այս առնչությամբ Դատարանը մատնանշում է պահանջը, որ կողմերը պետք է գործի քննման ընթացքում հավասարապես լսվեն և նրանց առարկություններին պետք է, ինչպես հարկն է. արձագանքեն, և նշում է, որ դիմումատուն Ս.Ս.-ի տված վկայության վերաբերյալ լուրջ առարկություններ է արել՝ առաջ բերելով Ս.Ս.-ի վկայության մեջ առկա տարբեր անհամաձայնությունները և

տրամաբանության բացակայությունը, ինչպես նաև նրա և քննվող քրեական հանցագործությունների միջև կապի բացակայությունը (տե՛ս վերը՝ կետ 18): Դիմումատուն հղում է կատարել հատուկ փաստերի և փաստաթղթերի, որոնք կասկածի տակ են դնում Ս.Ս.-ի վկայությունը: Նա նշել է Ս.Ս.-ի վկայության խճճվածությունն ու անճշտությունը: Ինչ վերաբերում է Ս.Ս.-ի մեղադրանքին, որ դիմումատուն Բանջա Լուկայում բիզնես է ծավալել այն գումարով, որը վերցրել է տուժողներից 1998թ-ին, դիմումատուն ներկայացրել է փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, որ նա մեքենաների առք ու վաճառքի բիզնեսը սկսել է դեռ 1990թ-ից: Նա նաև վիճարկել է Ս.Ս.-ի արժանահավատությունը որպես վկա՝ հիմնվելով նրա մոտ առկա մտավոր հիվանդության վրա:

47. Դատարանը ոչ պատշաճ է համարում այս փաստարկների վերաբերյալ ազգային դատարանների արձագանքները: Նրանք ջանք չեն գործադրել ճշտելու Ս.Ս.-ի տված վկայությունը, այլ ընդունել են այն որպես ճշմարիտ անկախ այն փաստից, որ բժշկական փաստաթղթերը ցույց են տալիս, որ նա տառապում է զգայական անկայունության և թատերական անհատականության խանգարումով:

48. Ազգային դատարանները նաև չեն մեկնաբանել վկաների հակասական վկայությունները, ինչպես օրինակ Ջ.Մ.-ի և Ն.Փ.-ի վկայությունները, ովքեր հանդիսանում են նույն սենյակում մնացող երկու այլ բանտարկյալներ, որոնց վկայությունը սենյակում մահճակալների դիրքերի վերաբերյալ հակասում են Ս.Ս.-ի վկայությանը: Ս.Ս.-ն սկզբում ասել է, որ իր մահճակալը գտնվել է Մ.Ջ.-ի մահճակալի մոտ, հետո ասել է, որ իր մահճակալը գտնվել է դիմումատուի մահճակալի մոտ, մինչդեռ Ջ.Մ.-ն ասել է, որ Մ.Ջ.-ի և Ս.Ս.-ի մահճակալների միջև գտնվել է բանտարկյալ Բ.-ի մահճակալը, և որ դիմումատուի մահճակալը



մյուս մահճակալների նկատմամբ եղել է ուղղահայաց դիրքով: Ն.Փ.-ն ասել է, որ իր մահճակալը գտնվել է Մ.Ջ.-ի և Ս.Ս.-ի մահճակալների միջև, և որ դիմումատուի մահճակալը գտնվել է մյուս կողմում: Այս վկայությունները կարևոր են, քանի որ Ս.Ս.-ն պնդել է, որ կարողացել է լսել դիմումատուի և Մ.Ջ.-ի զրույցները, քանի որ իր մահճակալը գտնվել է նրանց մահճակալների կողքին:

49. Ավելին, Ս.Ս.-ն ասել է, որ դիմումատուի՝ Ջագրեբի բանտային հիվանդանոցի թիվ 206 սենյակ ժամանելուց հետո դիմումատուն և Մ.Ջ.-ն ձեռք սեղմելով այնպես են միմյանց բարևել, կարծես թե երկար ժամանակ ճանաչել են միմյանց: Հակառակ սրան Ջ.Մ.-ն ասել է, որ դիմումատուն և Մ.Ջ.-ն գրեթե չեն շփվել դիմումատուի ժամանմանը հաջորդած առաջին մի քանի օրը, և որ ոչ մի այնպիսի բան չի եղել, որը ցույց կտար, որ նրանք նախկինում ճանաչել են միմյանց: Մ.Ջ.-ն նույնպես ասել է, որ առաջին մի քանի օրը նա ոչ մի շփում չի ունեցել դիմումատուի հետ:

50. Ազգային դատարանները վերը նշվածից ոչ մի բանի վերաբերյալ մեկնաբանություններ չեն արել:

51. Հիմնվելով վերոհիշյալի վրա՝ Դատարանը գտնում է, որ սույն գործում ներպետական դատարանների որոշումները պատշաճ կերպով չեն պատճառաբանվել: Ուստի, վկաների ցուցմունքների ակնհայտ անհամաձայնություններին, ինչպես նաև Ս.Ս.-ի առողջական վիճակին բոլորովին կամ բավարար չափով անդրադարձ չի կատարվել: Այսպիսի հանգամանքներում կարելի է ասել, որ ազգային դատարանների որոշումները չեն բավարարել քրեական դատավարության հիմնական պահանջը, այն է՝ մեղադրող կողմը պետք է ապացուցի մեղադրյալի մեղքը ողջամիտ կասկածից դուրս, և չեն հետևել քրեական օրենսգրքի հիմնական սկզբունքին, այն է՝ ին

դուբին պրո բեռ (տե՛ս, մուտատիս մուտանդիս, Բարբերան, Մեսեզեն և Ջաբարդոն ընդդեմ Իսպանիայի գործով վճիռը, դեկտեմբերի 6, 1988թ, կետ 77, շարք Ա թիվ 146. Լավենցն ընդդեմ Լատվիայի, թիվ 58442/00, կետ 125, նոյեմբերի 28, 2002թ. և Մելիչը և Բեքն ընդդեմ Չեխիայի Հանրապետության, թիվ 35450/04, կետ 49, հուլիսի 24, 2008թ):

52. Վերը ներկայացված նկատառումները բավարար են թույլ տալու Դատարանին եզրակացնել, որ դիմումատուի դեմ հարուցված քրեական գործն ընդհանուր վերցրած խախտել է դիմումատուի՝ արդար դատաքննության՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված իրավունքը:

53. Այս եզրակացություններից ելնելով՝ Դատարանն անհրաժեշտ չի համարում անդրադառնալ դիմումատուի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի վրա հիմնված բողոքին:

II. Կոնվենցիայի 41-րդ հոդվածի կիրառումը

54. Կոնվենցիայի 41-րդ հոդվածը սահմանում է.

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռնում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, սուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

Ա. Վնաս

55. Ինչ վերաբերում է դրամական վնասին, դիմումատուն պահանջում է 12,845.844 եվրո փոխհատուցում կալանքի տակ լինելու ժամանակ կորցրած եկամուտների դիմաց, 159,084 եվրո իր ընկերության շահույթի չափով, քանի որ իր բանտարկության

52



Թարգմանությունը կատարվել է Ամերիկյան Իրավաբանների
Ընկերակցություն CEELI, INC.-ի Հայաստանյան
ներկայացուցչության օժանդակությամբ:

պատճառով այն դադարեցրել է իր գործունեությունը, 1,362.92 եվրո վճարների դիմաց, որ նա կատարել է բանտարկության պատճառով վաճառքի պայմանագիրը չեղյալ համարելու հետևանքով և 3,000 եվրո այն ծախսերի համար, որ կատարել է նրա ընտանիքը Բոսնիա և Հերցեգովինայից իրեն տեսակցելու նպատակով Խորվաթիա գալու համար: Նա նաև պահանջել է 100,000 եվրո ոչ գույքային վնասի համար:

56. Կառավարությունն առարկել է, հայտարարելով, որ պահանջված գումարը չափազանց մեծ է և չհիմնավորված:

57. Ինչ վերաբերում է դրամական վնասին, Դատարանը չի գտնում ոչ մի պատճառահետևանքային կապ հայտնաբերված խախտման և պահանջված փոխհատուցման միջև: Ուստի այն մերժում է դրամական վնասի փոխհատուցման պահանջը:

58. Դատարանը նաև ընդգծում է, որ 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման փոխհատուցման ամենապատշաճ ձևը կլինեն դիմումատուի համար այնպիսի պայմանների երաշխավորումը, որոնցում նրա այդ իրավունքը խախտված չէր լինի (տե՛ս Պիերսակն ընդդեմ Բելգիայի գործով վճիռը (հոդված 50), հոկտեմբերի 26, 1984, կետ 12, շարք Ա, թիվ 85, և Լունգոցին ընդդեմ Ռումինիայի գործով վճիռը, թիվ 62710/00, կետ 55, հունվարի 26, 2006թ): Դատարանը գտնում է, որ այս սկզբունքը կիրառելի է նաև այս գործում: Հետևաբար այն գտնում է, որ փոխհատուցման ամենապատշաճ ձևը Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի պահանջներին համապատասխան նոր դատավարություն նշանակելն է, եթե դիմումատուն այդպիսի ցանկություն հայտնի (տե՛ս, մուտատիս մուտանդիս, Սալդուզն ընդդեմ Թուրքիայի գործով վճիռը, թիվ 36391/02, կետ 72, նոյեմբերի 27, 2008թ):

59. Ավելին, Դատարանը գտնում է, որ դիմումատուն կրել է որոշակի ոչ գույքային վնաս կապված իր կամայական դատապարտման հետ: Վնասը չի կարող բավարար կերպով փոխհատուցվել խախտման հայտնաբերմամբ: Անկողմնակալության սկզբունքով անելով իր գնահատումը՝ Դատարանը որպես ոչ դրամական վնասի փոխհատուցում տրամադրում է դիմումատուին 9,000 եվրո գումար՝ ներառյալ ցանկացած հարկ, որ կարող է գանձվել այդ գումարի հետ կապված:

Բ. Ծախսեր և ծախքեր

60. Դիմումատուն նաև պահանջել է 4,033 եվրո ծախսերի համար, որոնք կատարվել են ներպետական դատարանների առջև և 29,755.76 եվրո այն ծախսերի համար, որոնք կատարվել են Դատարանի առջև:

61. Կառավարությունն առարկել է՝ հայտարարելով, որ դիմումատուն չի կարող փոխհատուցում պահանջել այն ծախսերի համար, որոնք կատարվել են ներպետական դատարանների կողմից գործի քննության ժամանակ, և որ նա չի ապացուցել, որ որևէ ծախս է կատարել Դատարանի առջև կայացած քննության ժամանակ:

62. Համաձայն Դատարանի նախադեպային իրավունքի դիմումատուն իրավասու է ստանալ ծախսերի փոխհատուցում միայն այն դեպքում, երբ ցույց է տրվել, որ դրանք իրականում և ըստ անհրաժեշտության են արվել և ողջամիտ են չափի առումով:

63. Ինչ վերաբերում է ծախսերին, որոնք կատարվել են ներպետական դատարանների կողմից գործի քննության ժամանակ, Դատարանը գտնում է, որ դիմումատուին հնարավորություն է տրված վերաբացել այդ գործերը, և որ նոր գործի շրջանակներում ազգային դատարանները ստիպված կլինեն ընդհանուր առմամբ անդրադառնալ դիմումատուի դեմ հարուցված քրեական գործի քննության ընթացքում կատարված



ծախսերին: Հիմք ընդունելով վերոհիշյալը՝ Դատարանը մերժում է ընդհանուր իրավասության ազգային դատարանների առջև դիմումատուի դեմ հարուցված քրեական գործի քննության ընթացքում կատարված ծախսերի փոխհատուցման պահանջը: Սակայն Սահմանադրական դատարանի առջև դիմումատուի կողմից կատարված ծախսերը հաշվի չեն առնվի նոր քրեական գործում: Դատարանը նշում է, որ դիմումատուի սահմանադրական բողոքը նպատակ է ունեցել փոխհատուցել այն իրավիճակի համար, որում Դատարանը գտել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի խախտում: Ուստի Դատարանի որոշմամբ դիմումատուին 674 եվրո գումարի չափով փոխհատուցում պետք է տրամադրվի այն ծախսերի համար, որոնք կատարվել են Սահմանադրական դատարանի առջև:

64. Ավելին, հաշվի առնելով ձեռքի տակ եղած փաստաթղթերը և վերոհիշյալը, Դատարանը խելամիտ է համարում տրամադրել 8,000 եվրո գումար Դատարանի առջև գործի քննության համար՝ ներառյալ ցանկացած հարկ, որ կարող է այդ գումարի հետ կապված գանձվել դիմումատուից:

Գ. Տուգանային տոկոսներ

65. Դատարանը գտնում է, որ տուգանային տոկոսը պետք է գանձվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության սահմանային տոկոսադրույքի հիման վրա՝ հավելած երեք տոկոս:

ՎԵՐՈԳՐՅԱԼԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ ԴԱՏԱՐԱՆԸ ՄԻԱԶԱՅՆ

1. Համարում է դիմումը ընդունելի.
2. Գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում.



3. Գտնում է, որ կարիք չկա քննել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերի վրա հիմնված բողոքը.

4. Գտնում է

(a) որ պատասխանող երկիրը, դիմումատուի պահանջի դեպքում, պետք է երաշխավորի գործի վերաբացումը վճռի՝ Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալուց հետո վեց ամսվա ընթացքում.

(b) որ պատասխանող երկիրը պետք է վճռի՝ Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետին համապատասխան վերջնական դառնալուց հետո երեք ամսվա ընթացքում դիմումատուին վճարի հետևյալ գումարները, որոնք պետք է վերածվեն խորվաթական կունայի վճռի կայացման օրը գործող արժույթով.

(i) 9,000 եվրո (ինը հազար եվրո)՝ ներառյալ ցանկացած հարկ, որ կարող է գանձվել ոչ գույքային վնասի հետ կապված.

(ii) 8,674 եվրո (ութ հազար վեց հարյուր յոթանասունչորս եվրո)՝ ներառյալ ցանկացած հարկ, որ կարող է գանձվել ծախսերի հետ կապված.

(c) որ վճարումը վերոհիշյալ եռամսյա ժամկետի ավարտից հետո կատարելու դեպքում չվճարված գումարի մասով պետք է հաշվարկվի տուգանային տոկոս, որը հավասար է չկատարված պարտավորության ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության սահմանային տոկոսադրույթին՝ գումարած երեք տոկոս.

5. մերժում է դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարվել է անգլերենով, և գրավոր հրապարակվել է 2001թ-ի դեկտեմբերի 13-ին՝ համաձայն Դատարանի կանոնների 77-րդ կետի 2-րդ և 3-րդ կետերի:

Սորեն Նիելսեն
Մատենավար

Անատոլի Կովլեր
Նախագահող

